Հավելված N 5
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 6-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լոռի 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ **3**

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ **4**

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ **5**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ **6**

I. ՆԱԽԱԲԱՆ **7**

II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ **8**

III. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ **10**

3.1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 10

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ 11

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 13

3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 15

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 18

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 21

3.7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 23

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 25

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 30

3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ 33

3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ 36

3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 40

3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 41

IV. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT) **43**

V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ **47**

5.1. ՏԵՍԼԱԿԱՆ 47

5.2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47

5.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 48

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ **50**

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ **56**

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ **60**

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ **63**

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Մշտական բնակչությունն ըստ տարիքային խմբերի, 2016թ. 11
Աղյուսակ 2. ՀՀ Լոռու մարզում բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները 12
Աղյուսակ 3. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն, 2015թ. 17
Աղյուսակ 4. ՀՀ Լոռու մարզում ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը 17
Աղյուսակ 5. ՀՀ Լոռու մարզում ճանապարհային ցանցի խտությունը 18
Աղյուսակ 6. ՀՀ Լոռու մարզի ներմարզային ճանապարհային ցանցի առկա վիճակն ըստ տարածաշրջանների 18
Աղյուսակ 7. ՀՀ-ում, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում տնային տնտեսությունների դրամական եկամուտների արդյունքները մեկ շնչի հաշվով (միջին ամսեկան) 2015թ. 22
Աղյուսակ 8. ՀՀ-ում, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում ամսական անվանական աշխատավարձը, ըստ տնտեսության հատվածների (2013-2015թթ.) 22
Աղյուսակ 9. Զբաղվածության մակարդակը 2012-2015թթ. 23
Աղյուսակ 10. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների 24
Աղյուսակ 11. Աշխատուժի առաջարկ, 2015թ. դեկտեմբեր 24
Աղյուսակ 12. Աշխատանք փնտրողներ և աշխատանքով ապահովվածներ, 2015թ. մարդ 25
Աղյուսակ 13. ՀՀ Լոռու մարզի անասնագլխաքանակը 2011-2016թթ. հունվարի 1-ի դրությամբ 27
Աղյուսակ 14. ՀՀ-ում, ՀՀ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը, 2011-2015թթ. 28
Աղյուսակ 15. Հանրակրթական դպրոցներ 31
Աղյուսակ 16. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ 33
Աղյուսակ 17. Աղքատության մակարդակը 34
Աղյուսակ 18. Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքներ 34
Աղյուսակ 19. Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական, դրամ 34
Աղյուսակ 20. ՀՀ Լոռու մարզում գործող գրադարանների և թանգարանների գործունեությունը 35
Աղյուսակ 21. Առողջապահության հիմնական ցուցանիշները, 10 000 բնակչի հաշվով 35
Աղյուսակ 22. ՀՀ, Լոռու, Շիրակի մարզերում մթնոլորտային արտանետումների տեսակարար ցուցանիշը, 2013-2015թթ. 36
Աղյուսակ 23. Կեղտաջրերի հեռացում 36
Աղյուսակ 24. ՀՀ Լոռու մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ. 47
Աղյուսակ 25. ՀՀ Լոռու մարզի գերակայությունները 50
Աղյուսակ 26. ՀՀ Լոռու մարզում ընթացքի մեջ գտնվող ռազմավարական ծրագրեր 56
Աղյուսակ 27. Ռիսկեր, ռիսկերի մոնիթորինգ և նվազեցում 60

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծանկար 1. ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչությունը 2011-2015թթ., տարեվերջի դրությամբ 12
Գծանկար 2. ՀՀ Լոռու մարզի բնակչության խտությունը (ըստ տարածաշրջանների (մարդ/1կմ^2), ... 12
Գծանկար 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ 16
Գծանկար 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ 16
Գծանկար 5. ՀՀ Լոռու մարզում ՀԷԿ-երի և հողմակայանների թիվը, թողարկված էլեկտրաէներգիայի քանակը (2011-2015թթ.) 20
Գծանկար 6. ՀՀ Լոռու, Շիրակ, Տավուշի մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջին %-ային հարաբերությամբ, 2009-2015թթ. 21
Գծանկար 7. ՀՀ, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը, 2011-2015թթ. % 21
Գծանկար 8. ՀՀ Լոռու մարզի տնտեսական ակտիվությունը և համեմատությունը այլ մարզերի հետ, 2015թ. 23
Գծանկար 9. Գործազրկության մակարդակը, 2015թ. 24
Գծանկար 10. ՀՀ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները, 2015թ. 26
Գծանկար 11. ՀՀ Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ արտադրանքի ծավալում (2011-2015թթ.) 26
Գծանկար 12. ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արտադրանքի ծավալում (2011-2015թթ.) 28
Գծանկար 13. ՀՀ Լոռու մարզի համայնքային և գերատեսչական նախադպրոցական հաստատություններում երեխաների թվաքանակը ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2011-2015թթ. 30
Գծանկար 14. ՀՀ-ի, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների տեսակարար ցուցանիշները, 2015-2016 ուս. տարում 31
Գծանկար 15. ԲՈՒՀԵՐ 32
Գծանկար 16. ՀՀ Լոռու մարզում գործազրկությունն՝ ըստ կրթական մակարդակի 32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԳԾ	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
ՏԶԳՊ	Տարածքային զարգացման գործողությունների պլան
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ՁԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպության
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվության ընկերություն
ԲՄԿ	Բուժակ-մանկաբարձական կետ
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՀՊՃՀ	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

I. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ուղերձը ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության կապակցությամբ

ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին:

Դա կնպաստի հանրապետությունում աղքատության հաղթահարման ռազմավարական գերակա նպատակ հռչակված տարածքային համաչափ զարգացման խնդրի, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի համայնքների զարգացման ծրագրերում ներառված առաջնահերթ հիմնախնդիրների և մարտահրավերների արդյունավետ լուծմանը: Ծրագիրը կազմվել է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությամբ, մարզի ուժեղ և թույլ կողմերի վերհանմամբ, հնարավորությունների և հնարավոր բացասական ազդեցությունների քննարկմամբ, զարգացման հիմքում դրվող նպատակների սահմանմամբ, զարգացման գերակայությունների որոշմամբ, դրանց դասակարգմամբ՝ ըստ առաջնահերթությունների, և այդ հենքի վրա խարսխված, արդեն սկսված և առաջիկայում իրականացվելիք ծրագրերի նախանշմամբ: Դրանք իրենց կոնկրետությամբ, չափելիությամբ, ռեսուրսահենքությամբ և իրագործելիությամբ կապահովեն ՀՀ Լոռու մարզի զարգացումն այն նպատակայնությամբ, որ 2025 թվականին ՀՀ Լոռու մարզն կունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն:

Ծրագրի կազմման աշխատանքները համակարգվել են ԻՄ կողմից: Այդ գործում իր զգալի ներդրումն է ունեցել նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ինչպես նաև ԵՄ փորձագետները:

ՀՀ Լոռու մարզի տարածքային զարգացման տեսլականն է՝ **2025թ.-ին ՀՀ Լոռու մարզը կունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն:**

Ներկայիս իրավիճակի, առկա հնարավորությունների բազայի, հիմնախնդիրների և մարտահրավերների վերլուծությամբ ու համադրությամբ կանխորոշվեց մարզի տարածքային զարգացման տեսլականը:

Ծրագրի ստեղծման գործում գնահատելի ներդրում են ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն ու ԵՄ փորձագետները, որոնք օժանդակել են տեղի թիմին՝ իրապես վերլուծություններ և դրանց հետքի վրա կանխորոշումներ սահմանելու գործում:

Արդյունքում, ունենք ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն՝ հստակ և իրատես մի ծրագիր, որի իրականացման կենսական անհրաժեշտությունն անվիճելի է յուրաքանչյուր աշխատասեր ու գործարար լոռեցու համար, հնարավորություններ ստեղծող և ոգեշնչող:

Արթուր Նալբանդյան

II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ ՀՀ Լոռու մարզում՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն բխում է ազգային ռազմավարական ծրագրերի պահանջներից և մասնակցային եղանակով ներգրավում բոլոր շահագրգիռ կողմերին:

2. *Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի* ***գեղջկականն է****, ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ*, որին հասնելու նպատակով իրավիճակի վերլուծության հիման վրա մշակված մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը սահմանում է հետևյալ ռազմավարական նպատակները.

1) ***Մինչև 2025թ. մարզի գնդեսական աճի ապահովում՝ գնդեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում՝ մինչև 10%,***
2) ***Մինչև 2025թ. մարզի երեք գարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում՝ շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա,***
3) ***Մինչ 2025թ. ՀՀ Լոռու մարզում կբարելավվի գարածքային և գեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը:***

3. Դրանից բխող զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

1) ***Արդահանմանը միտված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի,***
2) ***Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում,***
3) ***Մշակութային, գյուղական գուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային գուրիզմի և էկոգուրիզմի զարգացում:***

4. Ռազմավարական նպատակներին հասնելու համար ռազմավարական չափորոշիչներն են.

1) ***2025թ.-ի դրությամբ*** *մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 72%-ի հանրապետական միջինի նկատմամբ,*
2) ***2025թ.-ի դրությամբ*** *ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում՝ 10%-ով,*
3) ***2025թ.-ի դրությամբ*** *ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում՝ 12%-ով,*
4) ***2025թ.-ի դրությամբ*** *գործազրկության մակարդակը 15.7%-ից իջեցնել մինչև 8.8%-ի,*
5) ***2025թ.-ի դրությամբ*** *աղքատության մակարդակը՝ 36.2%-ից հասցնել ոչ ավել, քան 26%-ի,*
6) ***2025թ.-ի դրությամբ*** *նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվի աճ՝ 20%*
7) ***2025թ.-ի դրությամբ*** *մարզային վարչակազմերի բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թիվը կհասնի 95%-ի,*
8) ***2025թ.-ի դրությամբ*** *մարզային և համայնքային աշխատողների 80%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր՝ նվիրված մարզային/տեղական զարգացմանը:*

5. Այնուհետև, թվարկվում է այն ինստիտուցիոնալ շրջանակը, այն է՝ մարզային վարչակազմը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով, որոնց ջանքերով պետք է իրականացվի ռազմավարությունը կյանքում:

6. ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի՝ համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ,
2) ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում,
3) ՄԶՌ-ների վերանայում,
4) ՄԶՌ-ների գնահատում:

7. Ներկայացվում են ռազմավարության իրականացման գործընթացի և իրականացնող սուբյեկտների հնարավոր ռիսկերը, ռիսկերի նվազեցման գործոնները, ՄԶՌ-ի գնահատումը հետևյալ չափորոշիչներով.

1) ծրագրի արդյունավետություն,
2) ծրագրի արդյունավորություն,
3) ծրագրի համընթացություն,
4) ծրագրի համապատասխանություն:

III. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8. ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը), տարածքը՝ 3 799 քառ. կմ, ամենամեծը հանրապետության հյուսիսային մարզերից: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110 կմ երկարությամբ), արևելքից՝ ՀՀ Տավուշի, արևմուտքից՝ ՀՀ Շիրակի, հարավից՝ ՀՀ Կոտայքի և Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները:

9. ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ ունի ոչ հարթ ռելիեֆ, տարածքի մոտ 80%-ը զբաղեցնում են լեռնաշղթաները և խոշոր լեռները: Նրա տարածքով են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154 կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային ջրերի աղբյուրներով: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800 մ բարձրության վրա:

10. Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8^{0}C-ից մինչև +18°C ամռանը: Ի տարբերություն ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերի, այստեղ տեղումների քանակը բավականին մեծ է, տարեկան դիտարկվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

11. Մարզը հարուստ է անտառային և լեռնատափաստանային տարածքներով, ինչպես նաև մերձալպյան մարգագետիններով: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101205 հա, որից անտառածածկ է 86 հազ. հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները:

12. ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251 052.7 հա (մարզի տարածքի 66% և հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 12.3%), որից՝ վարելահող 42 089.4 հա (16.8%), բազմամյա տնկարկներ՝ 420.7 հա (0.2%), խոտհարքներ՝ 35 110.4 հա (14.0%), արոտավայրեր՝ 145 650.5 հա (58%), այլ հողատեսքեր՝ 27 781.6 հա (11.0%): Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 9 612.1 հա (22.8%), որոնք հիմնականում գտնվում են Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում:

13. Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17 576 հա մակերեսով, 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

14. Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Օգտակար հանածոները ներկայացված են հիմնականում ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ մետաղական հանածոներից են պղինձը, մոլիբդենը, ոսկին: Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 4-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում է Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը: Ներկայումս մարզի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության 4 թույլտվություն՝ 3 մետաղական և 1 ոչ մետաղական:

15. Մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (3-ից 1-ին գոտիականության): Հատկապես մարզի կենտրոնական մասն իր Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներով առավել զգայուն են սպասվելիք 9 և ավելի ուժգնությամբ երկրաշարժերին: Թերևս, դա էր պատճառը, որ 1988թ.-ին Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժն ավերեց տարածաշրջանը և լուրջ վնասներ հասցրեց մարզի տնտեսությանը:

16. Մարզում առկա են նաև մեծ թվով սողանքավտանգ տարածքներ, որոնք հատկապես կարող են ակտիվանալ երկրաշարժերի ժամանակ: Մասնավորապես սողանքավտանգ են Վանաձոր քաղաքին հարող Փամբակի լեռնաշղթայի լանջերը:

17. ՀՀ Լոռու մարզն առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ, հարուստ պատմամշակութային ժառանգությամբ և համարվում է հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի հուշարձաններ ու կոթողներ, այդ թվում հայաստանյան խոշորագույն և նշանավոր Սանահին և Հաղպատ վանական համալիրները, որոնք ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

19. ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 225.0 հազար մարդ (հանրապետության բնակչության 7.5%-ը), այդ թվում՝ քաղաքային 132.8 հազար մարդ (59.0 %), գյուղական՝ 92.2 հազար մարդ (41.0 %), կամ 2001թ.-ի դրությամբ նվազել է 61 408-ով (21.4%): 2015թ. արդյունքներով ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչության թվի տեսակարար կշիռը Հանրապետության ընդհանուր թվում կազմել է 7.5%, այդ թվում քաղաքային բնակչությունը՝ 7.0%, գյուղական բնակչությունը՝ 8.4%:

Աղյուսակ 1. Մշտական բնակչությունն ըստ տարիքային խմբերի, 2016թ.

Տարիքը, տարեկան	Ընդամենը բնակչություն		Լոռի	
	մարդ	%	մարդ	%
0-34	1 534 256	51.2	113 623	50.5
35-64	1 135 991	37.9	84 220	37.4
65-80+	328 330	10.9	27 111	12.1
Ընդամենը	2 998 577	100.0	224 954	100.0

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: Հղումը՝ http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

20. ՀՀ Լոռու մարզի բնակչության տարիքային բաշխվածքի վերլուծությունից պարզ է դառնում, որ բնակչության տարիքային կազմի տեսանկյունից մարզի բնակչությունը ծերացել է: Վերջին 5 տարիների բնակչության աճի դինամիկան ցույց է տալիս, որ 2016թ. տարեսկզբի դրությամբ

մշտական բնակչությունը նվազել է 10.6 հազ. մարդով (4.5%): 2016թ. տարեսկզբի դրությամբ մարզի քաղաքային բնակչության թիվը 2012թ. տարեսկզբի համեմատ նվազել է 5.0 հազ. մարդով (3.6%), իսկ գյուղական բնակչությունը՝ 5.6 հազ. մարդով (5.8%):

Գծանկար 1. ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչությունը 2011-2015թթ., տարեվերջի դրությամբ



Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf

Աղյուսակ 2. ՀՀ Լոռու մարզում բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները

(1000 բնակչի հաշվով)

	Ծնված					Մահացած					Բնական աճ				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	14.3	14.0	13.8	14.3	13.9	9.2	9.1	9.0	9.2	9.3	5.1	4.9	4.8	5.1	4.6
Լոռի	**14.3**	**14.2**	**13.6**	**14.6**	**13.6**	**12.3**	**12.0**	**12.1**	**12.0**	**12.5**	**2.0**	**2.2**	**1.5**	**2.6**	**1.1**

Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf

21. Աղյուսակից 2-ից երևում է, որ մարզում բնակչության թիվը պակասել է բնական աճի և հիմնական արտագաղթի հետևանքով: 2016 թվականի առաջին կեսին ծնունդներն ըստ սեռերի ՀՀ Լոռու մարզում կազմել է 109 տղա, 100 աղջիկ:

22. ՀՀ Լոռու մարզի քաղաքային համայնքները 8-ն են, իսկ գյուղականը՝ 99-ը: Բնակչության տեղաբաշխվածությունը հիմնականում գերակշռում են միջպետական ճանապարհների երկայնքով: Մարզի լեռնային տարածքները նոսր են բնակեցված: Եթե Հայաստանի բնակչության խտությունը 1կմ^2 վրա 2015թ. կազմել է 101 մարդ (մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով), ապա ՀՀ Լոռու մարզում՝ կազմել է 60 մարդ, 2011թ.-ի 62 մարդու դիմաց, հանրապետական միջինից 1.7 անգամ պակաս: Մարզի ամենախիտ բնակեցված համայնքը մարզկենտրոն Վանաձորն է (խտությունը քառ. կմ-ի վրա 3208 մարդ):

Գծանկար 2. ՀՀ Լոռու մարզի բնակչության խտությունը (ըստ տարածաշրջանների (մարդ/1կմ^2), 2015թ.



Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ http://armstat.am/am/?nid=82&id=1847

23. Մարզում առկա բնակչությունը մշտական բնակչությունից պակաս է մոտ 8.5-ով և քանի որ 2015թ. հստակ տվյալներ հրապարակված չկան, հաշվարկներում օգտագործվել են մշտական բնակչության թվաքանակը:

24. Ըստ 2011թ. մարդահամարի արդյունքների ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչության 98.1% կազմել են հայեր, մարզի համայնքներում բնակվում են ռուս՝ (1.3%), հույն՝ (0.2%), եզդի, քուրդ, ասորի, և այլ ազգերի (0.4%) ներկայացուցիչներ: Քաղաքային համայնքներում բնակվում են 1655 (1.2%), իսկ գյուղական համայնքներում՝ 2816 (2.9%) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Մարզը դեռևս խորհրդային տարիներից ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Որոշակի տարիների հանրապետության մասշտաբով ազգային փոքրամասնությունների շուրջ 50%-ը բնակվում էր Տաշիրի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում: Վերջին 10-20 տարիների էթնիկական տեղաշարժերի հետևանքով մարզից արտագաղթել են մեծ թվով այլազգի բնակիչներ: Ազգային փոքրամասնություններն այստեղ բոլոր պայմաններն ունեն ազգային, մշակույթի և կրթության պահպանման գործում:

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

25. ՀՀ Լոռու մարզն առանձնահատուկ է մյուս մարզերից իր 6 խոշոր քաղաքներով՝ Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Թումանյան, ինչպես նաև փոքր երկու քաղաքներով՝ Ախթալա և Շամլուղ:

26. Վանաձոր: «Կանաչ քաղաք» Վանաձորը՝ ՀՀ Լոռու մարզի վարչական, մշակութային և կրթական կենտրոնն է: Հանրապետության 3-րդ խոշոր քաղաքը, ԽՍՀՄ-ի տարիներին՝ հանրապետության արդյունաբերական 2-րդ քաղաքը: Զբաղեցնում է 2 599.33 հա մակերես: Քաղաքը գտնվում է մարզի Փամբակի և Բազումի լեռների հովտում, ծովի մակերևույթից բարձր է 1 353 մ: Մայմեխ լեռնագագաթը (3081 մ) գտնվում է քաղաքի ծայրամասում: Քաղաքի միջով են հոսում Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետակները: Կլիման փափուկ է և մեղմ: Մշտական բնակչության թիվը 82.2 հազ. մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ), մարզի բնակչության 36.7%: Հեռավորությունը Երևանից 125 կմ է, քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի երկաթուղին: Վանաձոր քաղաքի տարածքում է գտնվում «Վանաձոր» դենդրոպարկ» պետական հիմնարկը: Նախկին քիմիական, մեքենաշինական, սարքաշինության հզոր տնտեսություն ունեցող քաղաքում ներկայումս գործում են 2 խոշոր և շուրջ 60 արտադրական ՓՄՁ-ներ, 2000-ից ավելի ծառայությունների և մանրածախ առևտրի կետեր:

Վանաձորը խնդրահարույց տարածք է արդյունաբերության առումով, որի տեսակարար կշիռը մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում կազմում է ընդամենը 4.9%, չնայած բնակչությունը՝ կազմում է 36.5%-ը: 2014թ.-ին ՀՀ կառավարությունը ձեռնարկեց ծրագիր Վանաձորը դարձնելու տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաք: ՀՊՃՀ-ի Վանաձորի մասնաճյուղին կից, քաղաքի հյուսիս արևելյան հատվածում կառուցվեց Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որը Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի տրամաբանական շարունակությունն է, ինժեներիայի զարգացման ուղղությամբ: Այն տարածաշրջանի համար կայուն զարգացման և աշխատատեղերի ստեղծման հիմք կարող է հանդիսանալ:

27. Ալավերդի: ՀՀ միջին մեծության քաղաքներից է, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 47 կմ է, Երևանից՝ մոտ 162 կմ: Ալավերդի համայնքի մակերեսը 47.99 քառ. կմ է, տարածվում է Դեբեդ գետի երկու ափերին: Բնակչության թիվը 13.0 հազ. մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ): Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, ինչը կարևոր առավելություն է ցանկացած արտադրանք հարևան հանրապետություն արտահանելու համար: Համայնքի միջով է անցնում Թբիլիսի–Երևան երկաթգիծը, Հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին, ինչպես նաև անդրսահմանային Դեբեդ գետը: Քաղաքը մարզի տնտեսության մեջ ծանրակշիռ տեսակարար կշիռն ունի (25.6%) գործող պղնձի կազմակերպության հաշվին: Ալավերդում են գտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահին և Հաղպատ վանական համալիրները, Սանահինի պատմական (Քարե) կամուրջը, «Միկոյան եղբայրների» տուն-թանգարանը և այլ կոթողներ: Քաղաքի կենտրոնական մասից դեպի Սանահին կոչվող թաղամաս գործում է ճոպանուղի:

28. Սպիտակ: Աշխարհին հայտնի դարձավ 1988թ.-ին տեղի ունեցած ահեղ երկրաշարժով: Այն գտնվում է Վանաձոր-Գյումրի և Վանաձոր-Երևան ավտոմոբիլային միջպետական նշանակության մայրուղիների խաչմերուկում, Փամբակի հովտում, Փամբակ գետի ափին, ծովի մակերևույթից 1538 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 20 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 95 կմ: Բնակչության թիվը 13.0 հազ. մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ): Քաղաքի վարչական տարածքը 6066.75 հա է: Սպիտակի տարածքը լեռնային է, գտնվում է բարեխառն կլիմայական գոտում: Այն հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, որտեղ գործում էր հացամթերքների կոմբինատը, կաթի գործարանը, վերելակաշինության գործարանը, կարի արտադրական միավորումը, ռետինատեխնիկական իրերի գործարանը և այլն: Սպիտակում այժմ գործում է «Ագրոհոլդիգ Արմենիա» ՍՊԸ-ն, որը զբաղվում է տոհմային անասնապահությամբ և կաթի արտադրությամբ, Սպիտակի թռչնաֆաբրիկան, կերերի արտադրամասը: Սպիտակ քաղաքում գործում են նաև առևտրի և սպասարկման ոլորտի 150 անհատ կազմակերպություններ:

29. Ստեփանավան: Բնությամբ, չափավոր խոնավ կլիմայով, սառնորակ աղբյուրներով հիմնադրման օրվանից հանրապետությունում հայտնի է որպես ամառանոցային քաղաք: Այն գտնվում է Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին, մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Վանաձոր-Թբիլիսի խճուղու վրա, մայրաքաղաք Երևանից 139 կմ և մարզկենտրոնից՝ 36 կմ հեռավորության վրա, բնակչության թվաքանակը 12.8 հազ. մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ): Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1500-1600 մետր է: Բնակչության հիմնական մասը ներկայումս զբաղված են գյուղատնտեսությամբ, առևտրով և սպասարկման ծառայություններով: Ստեփանավանում է գործում «Սագամար» ՓԲԸ-ն, մարզի հանքարդյունաբերական խոշոր ընկերություններից մեկը: Տարածաշրջանում պատմամշակութային կոթողների առկայությունը, արկածային և պասիվ հանգստի պայմանները, «Սոճուտ» դենդրոպարկ» պետական հիմնարկը, համայնքում գործող 6 առողջարաններն և հանգստյան գոտիները, որոնք շարունակությունն են քաղաքի նախկին ավանդույթի, խթան կարող են հանդիսանալ տուրիզմի և զբոսաշրջության զարգացման համար: Այսօր մշակվում են քայլարշավների երթուղիներ, որը շատ կգրավի արկածային տուրիզմի սիրահարներին:

30. Տաշիր: Գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում՝ Լոռվա Սարահարթում, այն գտնվում է ծովի մակարդակից 1 500 մ բարձրության վրա, ռելիեֆը սարահարթային է, խոնավ, տարեկան միջին տեղումների քանակը 800 մմ է, ձմեռը ցրտաշունչ է: Տաշիր համայնքի վարչական տարածքը 7 624.42 հա է, հեռավորությունը մարզկենտրոնից 52 կմ է, հեռավորությունը մայրաքաղաքից 156 կմ: Բնակչության թվաքանակը 7.5 հազ. մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ): Քաղաքի միջով հոսում է Տաշիր գետը, որը հանդիսանում է Դեբեդ գետի վտակ: Տաշիրը մարզի երկրորդ այլընտրանքային հնարավորությունն է Վրաստանի Հանրապետություն դուրս գալու համար: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնաբուծությամբ և կաթի վերամշակմամբ: Տաշիրում զարգացած է պանրի արտադրությունը, գործում են մեծ ու փոքր կաթի վերամշակման կազմակերպություններ: Արտադրված պանիրն արտահանվում է ԱՄՆ, ԱՊՀ երկրներ, մեծ պահանջարկ ունի նաև ամբողջ հանրապետությունում:

31. Թումանյան: Ներկայիս Թումանյան համայնքը ձևավորվեց 2016թ.-ին, ՀՀ կառավարության համայնքների խոշորացման ծրագրի արդյունքում: Համայնքի վարչական տարածքը կազմում է 29.9 հազ. հա, բնակչության թիվը (01.01.2016թ. դրությամբ)՝ 4 535 մարդ: Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ նախկին Թումանյան քաղաքը, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ գյուղերը: Համայնքի կենտրոնը Թումանյան քաղաքն է: Համայնքի տարածքն ամբողջությամբ անտառածածկ է, բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ: Խիստ անմխիթար վիճակում է միջհամայնքային նշանակության 16 կմ երկարությամբ ճանապարհը: Համայնքի բնակավայրերում աղբավայր չլինելը մեծապես վնասում է բնությանը և շրջակա միջավայրին: Բնակչության կենսապայմանների բարելավման, ծառայությունների և միջհամայնքային կապի հասանելիության, տնտեսության զարգացման համար ՀՀ կառավարությունն իրականացնում է համայնքի զարգացման ծրագիր:

32. Ախթալա: Վարչական տարածքը կազմում է 29.9 հազ. հա, բնակչության թիվը (01.01.2016թ. դրությամբ)՝ 2000 մարդ, գտնվում է մարզկենտրոնից 62 կմ հեռավորության վրա: Քաղաքը տեղադրված է Դեբեդ գետի ձախ ափին, Լալվար լեռան ստորոտում: Ծովի մակարդակից գտնվում է 740մ բարձրության վրա: Համայնքի կլիման մերձարևադարձային է: Շրջակայքում կան պղնձի, կապարի, արծաթի հանքավայրեր, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն և շահագործվում են: Քաղաքի շրջակայքում գտնվում է Ախթալայի հնավայրը, որի մեջ մտնում է Ախթալայի վանքը:

33. Շամլուղ: Գտնվում է Հայաստանի հյուսիս արևելյան մասում, Լալվար սարի ստորոտում: Վարչական տարածքը՝ 6.5 հազ. հա, բնակչության թիվը (01.01.2016թ. դրությամբ)՝ 700 մարդ, գտնվում է մարզկենտրոնից 75 կմ հեռավորության վրա, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Համայնքը շրջապատված է անտառներով և ժայռերով, գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մ բարձրության վրա: Համայնքի տնտեսության մասնագիտացման հիմնական ճյուղը արդյունաբերությունն է, կան կավի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն և արդյունահանվում են: Համայնքում հիմնականում զարգացած է հանքարդյունաբերությունը՝ շահագործվում է Շամլուղի պղնձի հանքավայրը: 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով մարզի աղետի գոտու քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերում բնակարան կորցրած ընտանիքների բնակարանով ապահովման խնդիրները լուծված են, բացառությամբ Վանաձոր քաղաքի 3, ինչպես նաև մարզի գյուղական բնակավայրերում 345 բնակարանային խնդիր ունեցող ընտանիքների:

3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

34. ՀՀ Լոռու մարզի մրցակցային առավելությունն է դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման և Մ3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները և մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Գործող օդանավակայաններ չկան:

35. Մարզում բեռնաշրջանառության ծավալների աճ է գրանցվել 2012-2014թթ. 16.3 մլն տոննա կմ-ից հասնելով 27.1 մլն տոննա-կմ, այսինքն՝ 66.3%-ով, սակայն 2014-2015թթ. մարզում արձանագրվել է

բեռնափոխադրումների նվազում և կազմել է 24.8 մլն տոննա-կմ, այսինքն՝ նվազման չափը կազմել է 8.5%: Միևնույն ժամանակ հանրապետության միջին ցուցանիշն ավելացել է շուրջ 33%-ով, իսկ ներհանրապետական բեռնափոխադրումները նվազել են շուրջ 25%-ով, հանրապետության ցուցանիշի 6.6% նվազման դեպքում: Այժմ քննարկման փուլում է Ալավերդու հանքաարդյունաբերական նոր գործարանի կառուցման ծրագիրը, որը մարզում կապահովի բեռնաշրջանառության աճ:

Գծանկար 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

36. Ուղևորաշրջանառության գծով մարզի ցուցանիշը նվազել է շուրջ 16.5%-ով, հանրապետության ցուցանիշի 8.3% նվազման դեպքում, իսկ ներհանրապետական ուղևորաշրջանառությունը նվազել է շուրջ 12.0%, հանրապետության ցուցանիշի 7.8% նվազման դեպքում:

Գծանկար 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ



Աղբյուրը՝ ԱՎԾ - ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

37. Ուղևորափոխադրումներից սպասարկվում է մարզի բնակչության մոտ 95%-ը: Մարզում գործում են 62 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ, որոնք սպասարկվում են 14 կազմակերպությունների կողմից: Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են մարզի խոշոր 3 քաղաքներում: Տրանսպորտի տեսանկյունից տարածքների միջև տարբերությունները գնահատելու համար ավելի պատշաճ տեղեկատվություն հնարավոր է ստանալ բնակչության թվին ու բաշխվածությանը համեմատ ճանապարհների հասանելիության գնահատման միջոցով:

Աղյուսակ 3. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն, 2015թ.

ՀՀ մարզեր	Ներմարզային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջև ներհամայնքային հասանելիության միջև, %
Լոռի	**16**	**92**	**575%**
Տավուշ	33	101	306%
Շիրակ	6	88	1467%

Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ.տարածքային զարգացման ռազմավարություն, էջ 18, (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

38. Մարզում առկա տրանսպորտային միջոցների քանակը բավարար չէ՝ անհրաժեշտ քարաթափումների և սողանքների հետևանքների վերացման, ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման, ուղևորափոխադրումների և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման ապահովման համար: Ընթացքի մեջ է ՀՏՋՀ-ի կողմից իրականացվող <<Թումանյան բազմաբնակավայր համայնքների համայնքային ճանապարհների սպասարկման և աղբահանության ծառայությունների ստեղծման, ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորման>> ծրագիրը:

39. Վերջին 5 տարիներին մարզում 3 անգամ աճել է ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը.

Աղյուսակ 4. ՀՀ Լոռու մարզում ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը

Լոռի	2011	2012	2013	2014	2015
Պատահարներ	*26*	*36*	*62*	*75*	*78*
Զոհեր	*15*	*13*	*24*	*14*	*27*
Վիրավորներ	*27*	*46*	*83*	*61*	*80*

Աղբյուրը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների Լոռու մարզային վարչության տեղեկատվություն

40. Հեռանկարում քննարկման առարկա կարող է դառնալ Ստեփանավան և Օձուն համայնքների օդանավակայանների շահագործումը, ինչի արդյունքում ավելի մատչելի կդառնան ուղևորափոխադրումներն ու բեռնափոխադրումները, կկրճատվի դրանց իրականացման ժամանակը:

41. Հեռահաղորդակցում: ՀՀ Լոռու մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապՆ ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա Սելլ/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ), իսկ վերջին 3 տարում ինտերնետ ծառայության ևս 3 մասնավոր ընկերությունների կողմից: Մարզի բոլոր քաղաքներն ապահովված են 3G կապով, 3G բջջային կայանները՝ օպտիկամանրաթելային կաբելային գծերով: «Արմենթել» ՓԲԸ-ն ՀՀ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:

42. ՀՀ փոստային կապի «Հայփոստ-թրաստ» ԲԲԸ ՀՀ Լոռու մարզի 137 փոստային մասնաճյուղերն ապահովում են մարզի համայնքների 100% ծածկույթ:

43. ՀՀ Լոռու մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 80% ծածկույթը և մարզի բնակչության 86.9%:

44. ՀՀ Լոռու մարզի ամբողջ տարածքն ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է հանրապետական և օտարերկրյա թվային 8 հեռուստաընկերությունների հաղորդումներ, մարզային «Ֆորտունա TV», գործում են 6 տեղական հեռուստաընկերություններ: Մարզկենտրոնում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ: Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր և Սպիտակ համայնքները:

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



45. ՀՀ Լոռու մարզի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 891.1 կմ, այդ թվում՝

1) միջպետական նշանակության՝ 218.9 կմ,
2) հանրապետական նշանակության՝ 264.3 կմ,
3) տեղական նշանակության՝ 407.9 կմ:

(աղբյուրը՝ ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշում)

Աղյուսակ 5. ՀՀ Լոռու մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով, (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	218.9	0.06	9.73
Հանրապետական	264.3	0.07	11.75
Մարզային (տեղական)	407.9	0.11	18.13
Ընդհանուր ավտոճանապարհներ	891.1	0.23	39.6
Երկաթուղի	107.0	0.03	4.76

Աղբյուրը՝ ՀՀ Լոռու մարզպետարան, վերլուծություն

46. Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4%-ը և նշված ավտոճանապարհները հիմնականում գտնվում են լավ վիճակում, ներկայումս հիմնանորոգվում է Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 90.191 կմ երկարությամբ միջպետական նշանակության ավտոճանապարհը (ավարտը նախատեսված է 2020թ.):

47. Մարզում վիճակի լավ գնահատական ունեցող մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների տեսակարար կշիռն ընդհանուրի նկատմամբ կազմում է 11.4%, բավարար՝ 28.8%, վատ վիճակի՝ 59.8%:

Աղյուսակ 6. ՀՀ Լոռու մարզի ներմարզային ճանապարհային ցանցի առկա վիճակն ըստ տարածաշրջանների

Տարածաշրջանի անվանումը	*Լավ (կմ)*	*Բավարար (կմ)*	*Վատ (կմ)*
Գուգարքի տարածաշրջան	1.9	10.7	55.6
Սպիտակի տարածաշրջան	15.5	25.5	68.2
Թումանյանի տարածաշրջան	11.6	53.2	46.3
Ստեփանավանի տարածաշրջան	5.2	16.1	16.6
Տաշիրի տարածաշրջան	17.3	19.0	45.2
Ընդամենը	46.4	117.4	244.1

Աղբյուրը՝ ՀՀ Լոռու մարզպետարան, վերլուծություն

48. Ճանապարհային ցանցի անբավարար վիճակի պատճառով ներկայումս մարզում 6 համայնքներում ունենք չսպասարկվող հասարակական տրանսպորտի երթուղիներ, ինչը դժվարացնում է համայնքների միջև հաղորդակցությունը: Առաջիկայում նախատեսվում է վերոնշյալ 6 համայնքները ևս ներառել ճանապարհային ցանցում: Բոլոր համայնքներում հիմնախնդիր է մնում ներհամայնքային ճանապարհների լուսավորության հարցը:

49. Մարզում շահագործվում են 175 կամուրջ և կամրջային անցումներ 2080 գծմ երկարությամբ, որոնցից առավել նշանակալի են վեցը: Նշված վեցից երեքը գտնվում են Մ6-ի երկայնքով, որոնք հիմնանորոգման ընթացքում են: Անմխիթար վիճակում են Տաշիր-Մեծավան ավտոճանապարհի կամուրջը, Դարպաս համայնքի երկու կամուրջները, Վանաձոր համայնքի Հալաբյան փողոցի կամուրջը, որը քաղաքի երկու խոշոր թաղամասեր կապող հիմնական ճանապարհն է, Հ-22 (Մ-6-Դսեղ-Մարց) հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրի կամուրջը:

50. Լանդշաֆտի առանձնահատկություններով պայմանավորված մարզի մի շարք համայնքներում առկա են քարաթափումներ և սողանքավտանգ տարածքներ ավտոճանապարհների և երկաթգծի հատվածներում: Գյուղատնտեսության զարգացման համար խնդիր է մնում համայնքների հանդամիջյան և դեպի հեռահար արոտավայրեր-խոտհարք տանող ճանապարհները:

51. Մարզի տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին կապող **երկաթգիծը:** Երկաթուղու գլխավոր գծի երկարությունը կազմում է 107 կմ (հանրապետականի 14.7%-ը), որի վրա գտնվում են 12 գործող կայարաններ: Վերջերս երկաթուղու ենթակառուցվածքների որոշակի մասը նորոգվել է, որի շնորհիվ մեծացել է հուսալիության աստիճանը:

52. Օդային տրանսպորտ: ՀՀ Լոռու մարզում գործող օդանավակայաններ չկան: Հեռանկարում քննարկման առարկա կարող է դառնալ Ստեփանավան և Օձուն համայնքների օդանավակայանների շահագործումը: Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ, պատկանում է ՀՀ ԱԻ նախարարությանը:

53. **Էներգետիկ ենթակառուցվածքներ:** Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ: ՀՀ Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային գետը՝ Դեբեդը, որի ափին դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին կառուցվել է «Ձորագետ հիդրո» ՀԷԿ-ը՝ 26.4 Մվտ ընդհանուր հզորությամբ: ՀԷԿ-ն արտադրում է հանրապետության հիդրոէներգիայի 4.1% և բավարարում մարզի պահանջների շուրջ 38.8%:

54. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրել 27 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 195 մլն.կվտժ՝ 63795 կՎտ ընդհանուր հզորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում են գտնվում ևս 9 փոքր ՀԷԿ-եր՝ 9699 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 39.8 մլն.կվտժ-ով:

55. 2005թ.-ին Պուշկինի լեռնանցքում՝ ծովի մակարդակից 2038 մ բարձրության վրա կառուցվել է 2.64 Մվտ ընդհանուր հզորությամբ «Լոռի-1» հողմակայանը: Այն Հայաստանում շահագործված

առաջին հողմակայանն է: Մարզում առկա է հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ պոտենցիալ:

Գծանկար 5. ՀՀ Լոռու մարզում ՀԷԿ-երի և հողմակայանների թիվը, թողարկված էլեկտրաէներգիայի քանակը (2011-2015թթ.)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների հիման վրա կատարած վերլուծություն

56. Գազաֆիկացում: Մարզում գազաֆիկացված է 83 համայնք (77.6%), որտեղ բնակվում է մարզի բնակչության շուրջ 97.0%:

57. Կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ: ՀՀ Լոռու մարզի, ինչպես նաև ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, սակայն մասնակի մաքրում իրականացվում է միայն Վանաձոր քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 36%-ը, մնացած քաղաքների կոյուղին միացված է հոսող գետերին:

58. Ջրամատակարարում: Ջրամատակարարումը 2016թ. մարզում իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների միջոցով և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Սեփական ջրամատակարարման համակարգ ունեցող համայնքները 56-ն են: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգից օգտվում է մարզի բնակչության 60%-ը: 2017թ. հունվարից «Վեոլիա Ջուր» ընկերությունը պաշտոնապես դարձել է Հայաստանի Հանրապետության խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական օպերատորն առաջիկա 15 տարվա համար:

59. Վանաձոր քաղաքի կենսաբանական կեղտաջրերի մաքրման կայանը գործում է 30% հզորությամբ, որն իրականացնում է կոյուղաջրերի մեխանիկական մաքրում: Անհրաժեշտ է Վանաձոր քաղաքի կոյուղաջրերի մաքրման կայանի վերանորոգումը, որպեսզի, բացի մեխանիկական մաքրումից կատարվի նաև քիմիական և կենսաբանական մաքրում: Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան և Տաշիր քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցում: ՀՀ Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ:

60. Աղբահանություն: Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում աղբահանությունը հիմնականում կատարվում է լոկալ ձևով, չկան պահանջվող նորմերին համապատասխան

աղբավայրեր, չկան նաև աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի): Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում, Գերմանական զարգացման բանկի (KFW-ի) աջակցությամբ իրականացվում է կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի ստեղծման ծրագիրը: ՀՀ Լոռու մարզում մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ արձանագրվել են՝ Վանաձոր, Սպիտակ քաղաքներում, Եղեգնուտ, Դեբետ, Մարգահովիտ, Լերմոնտովո, Ֆիոլետովո, Բազում, Արջուտ, Ազնվաձոր, Սարամեջ, Արևաշող, Քարաձոր, Նոր Խաչակապ, Ղուրսալի, Շիրակամուտ, Բլագոդարնոյե, Ձորամուտ, Կաթնառատ, Մղարթ, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Պուշկինո, Գարգառ, Ծաղկաբեր, Սարահարթ, Գեղասար, Գոգարան, Ճոճկան համայնքներում: Սանիտարա-քիմիական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 5084 նմուշի հետազոտություն, որոնցից 32 նմուշում արձանագրվել է շեղումներ (0.6%): Սանիտարա-քիմիական ցուցանիշներով շեղումներ արձանագրվել են՝ Քարաձոր, Մարգահովիտ, Լեռնավան, Ջրաշեն, Նոր Խաչակապ, Բլագոդարնոյե, Ձորամուտ, Արևաշող, Կաթնաջուր, Շիրակամուտ, Դեբետ, Եղեգնուտ համայնքային ջրատարներում:

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

61. Հանրապետության համախառն ներքին արդյունքը 2015թ. կազմել է 5 032.1մլրդ դրամ, ՀՀ Լոռու մարզում այն կազմել է 237.5մլրդ դրամ, աճը 2009թ.-ի համեմատությամբ՝ 204.7%: ՀՆԱ-ի տեսակարար կշիռը հանրապետական ընդհանուր ցուցանիշում կազմել է 5.0%: Մեկ շնչի հաշվով մարզի ՀՆԱ-ն 2015թ.-ին կազմել է 1 041.807դրամ, որը զիջում է ՀՀ-ում ամենաբարձր ցուցանիշ ունեցող ՀՀ Սյունիքի մարզին շուրջ 1.8 անգամ, իսկ միջին հանրապետական ցուցանիշին՝ 1.6 անգամ:

62. ՀՆԱ-ի աճը 2009-2015թթ.-ին մեկ շնչի հաշվով կազմել է 253.6% (ամենաբարձրը ՀՀ-ում), որը արդյունք է նաև բնակչության զգալի նվազման (19.1%):

Գծանկար 6. ՀՀ Լոռու, Շիրակ, Տավուշի մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջին %-ային հարաբերությամբ, 2009-2015թթ.



Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:
Հղումը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf

63. ՀՆԱ-ի բարձր ցուցանիշը պայմանավորված է հանրապետությունում առաջատար արդյունաբերական մարզ լինելու հանգամանքով:

Գծանկար 7. ՀՀ, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը, 2011-2015թթ. %



Աղբյուրը ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով,

64. Արդյունաբերության համախառն ներքին արդյունքի տեսակարար կշիռը մարզի 2015թ.-ի համախառն ներքին արդյունքում կազմում է 34.6%, աճը 2011թ.-ի նկատմամբ՝ 154.6% և այն գերազանցում է համեմատելի մարզերի ցուցանիշին, ՀՀ Շիրակի մարզին՝ շուրջ 3.0 անգամ և Տավուշի մարզին՝ 11.1 անգամ:

Աղյուսակ 7. ՀՀ-ում, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում տնային տնտեսությունների դրամական եկամուտների արդյունքները մեկ շնչի հաշվով (միջին ամսեկան) 2015թ.

(մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ)

	Ընդամենը դրամ եկամուտ	Այդ թվում՝						
		վարձու աշխատանք	ինքնազբաղ վածություն	գյուղմթերք և կենդան. վաճառք	սեփական եկամուտներ	պետական թոշակներ և նպաստներ	տրանս-ֆերտներ	այլ եկամուտ
ՀՀ	52 377	28 800	4 842	2 674	115	9 284	4 698	1 964
Լոռի	**37 413**	**15 410**	**1 587**	**886**	**0**	**11 171**	**5 486**	**2 873**
Շիրակ	38 217	13 974	1 765	4 789	157	9 498	6 203	1 831
Տավուշ	38 592	19 985	4 384	884	106	10 443	1 082	1 708

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 218:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf

65. Մարզում մեկ շնչի ընդհանուր եկամուտը կազմում է 37 413 դրամ, որը հանրապետական ցուցանիշից ցածր է 1.4 անգամ: Ընտանեկան եկամուտները մարզում հիմնականում առաջանում են վարձու աշխատանքի և պետական թոշակների և նպաստների միջոցով, որոնց տեսակարար կշիռը մարզի մեկ շնչի հաշվով կազմում է 71.0%, իսկ տրանսֆերտների ցուցանիշը 1.2 անգամ գերազանցում է հանրապետականի միջին ցուցանիշը: Մարզում կառավարելի եկամուտների (վարձու աշխատանք, ինքնազբաղվածություն, գյուղմթերք և կենդանիների վաճառք) ցուցանիշը կազմում է հանրապետական միջինի 49.2%, իսկ ինքնազբաղվածությունը 3.0 անգամ ցածր է հանրապետական ցուցանիշից և 2.8 անգամ ՀՀ Տավուշի մարզից: Աղյուսակային տվյալները ցույց են տալիս, որ մարզում գյուղատնտեսությունից ստացված եկամուտը 886 դրամ բավականին ցածր է, այն զիջում է հանրապետական միջին ցուցանշին 3.0 անգամ և ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշին՝ 5.4 անգամ: Գյուղատնտեսությունից ստացված եկամուտը մարզում կազմում է կառավարելի եկամուտների 2.3%-ը, այն դեպքում, երբ հանրապետական միջինը՝ 5.1% է: Մարզում զբաղվածների միջին եկամուտը 2015թ-ին 114 293 դրամ, ազգային միջինի նկատմամբ կազմում է 74.99%, ՀՀ Շիրակի մարզին զիջելով 15.86%-ային կետ և Տավուշից բարձր 11.15%-ային կետով:

Աղյուսակ 8. ՀՀ-ում, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում ամսական անվանական աշխատավարձը, ըստ տնտեսության հատվածների (2013-2015թթ.)

	Պետական (դրամ)				***Ոչ պետական (դրամ)***			
	2013	**2014**	**2015**	**աճը (%)**	**2013**	**2014**	**2015**	**աճը (%)**

ՀՀ	134193	146596	160522	119.6	160324	172073	184416	115.0
Լոռի	**96295**	**104491**	**114293**	**118.7**	**137635**	**156501**	**177325**	**128.8**
Շիրակ	97228	106067	116555	119.9	119389	137057	140567	117.7
Տավուշ	90080	99847	111752	124.1	125555	153526	161160	128.4

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

67. Մարզի աշխատողների ամսական աշխատավարձը միջին հանրապետական ցուցանիշից ցածր է, պետական հատվածում 28.8%-ով, ոչ պետական՝ 3.8%-ով:

3.7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

68. ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2015թ.-ին կազմել է 1 316.4 հազ. մարդ, որը ՀՀ ընդհանուր բնակչության 43.9%-ն է կազմում: 2015թ. ՀՀ Լոռու մարզում բնակվում է հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 8.7%-ը կամ 114.7 հազար մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 58.8%-ը: 2013թ.-ի նկատմամբ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է 12.5%-ով, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 7.3%-ով: Տնտեսական ակտիվությունը ՀՀ Լոռու մարզում (58.8%) բարձր է քան ՀՀ Շիրակի մարզում (56.1%) և ցածր, քան ՀՀ Տավուշի մարզում (65.3%): Լուրջ տարբերություններ կան տղամարդկանց (68.8%) և կանանց (51.6%), ինչպես նաև մարզի քաղաքային (50.8%) և գյուղական (70.9%) տարածքների միջև: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզի քաղաքային տարածքների ակտիվությունը հանրապետության ամենաբարձր ակտիվություն ունեցող մարզի (ՀՀ Վայոց Ձոր) մակարդակին զիջում է 1.4 անգամ:

Գծանկար 8. ՀՀ Լոռու մարզի տնտեսական ակտիվությունը և համեմատությունը այլ մարզերի հետ, 2015թ.



Աղբյուրը՝ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականին http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

69. 2015թ. արդյունքներով զբաղվածների թիվը մարզում կազմել է 96.7 հազ. մարդ (49.6%), որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 1.3%-ով: Այն իր մեջ ընդգրկում է նաև գյուղատնտեսության մեջ զբաղվածները՝ 46.1 հազ. մարդ: Զբաղվածության մակարդակը զգալիորեն ցածր է մարզի քաղաքային համայնքներում (37.0%) և կանանց շրջանում (43.0%):

Աղյուսակ 9. Զբաղվածության մակարդակը 2012-2015թթ.

(%)

	Տ/թ	Ընդամենը	Տղամարդ	կին	քաղաք	գյուղ

ՀՀ	2015	50.9	59.8	43.8	42.6	64.7
	2014	52.0	61.6	44.5	44.9	64.5
	2013	53.2	62.3	45.8	44.6	68.2
	2012	51.9	60.2	45.2	42.5	69.4
Լոռի	**2015**	**49.6**	**58.6**	**43.0**	**37.0**	**68.5**
	2014	**54.9**	**62.8**	**50.0**	**44.6**	**70.9**
	2013	**50.3**	**57.6**	**45.1**	**39.5**	**65.4**
	2012	**48.9**	**52.7**	**46.1**	**37.0**	**67.8**

Աղբյուրը՝ ԱՎԾ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականին
Հղումը՝ (http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf)

70. ՀՀ Լոռու մարզում զբաղվածների մեջ 51.4% ոչ ֆորմալ զբաղված է:

Աղյուսակ 10. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների

	1 000 աշխատատեղ						Ընդամենը զբաղվածության նկատմամբ, %					
	ընդամենը		գյուղատնտեսական		ոչ գյուղատնտեսական		ընդամենը		գյուղատնտեսական		ոչ գյուղատնտեսական	
	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015
ՀՀ	584.0	526.3	419.9	401.5	164.1	124.8	49.9	47.7	99.3	99.0	22.0	17.9
Լոռի	**74.7**	**52.8**	**64.4**	**46.1**	**10.2**	**6.8**	**60.6**	**51.4**	**99.4**	**98.5**	**17.6**	**12.1**
Շիրակ	65.1	54.3	51.2	46.5	13.8	7.8	62.1	60.6	100.0	100.0	25.8	18.1
Վայոց ձոր	14.9	14.2	12.6	12.5	2.3	1.7	56.1	54.5	98.2	99.8	16.8	12.5

Աղբյուրը՝ ԱՎԾ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թ.:
Հղումը՝ http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

71. Ինչպես հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Լոռու մարզում բարձր է գործազրկության մակարդակը: 2015թ.-ին այն կազմել է 15.7%, որը հանրապետական միջին մակարդակից ցածր է 2.8%-ով: Տղամարդկանց գործազրկությունը մարզում կազմել է 14.9%, իսկ կանանցը՝ 16.5%: Մարզում գործազրկության մակարդակը գյուղական համայնքներում միջին հանրապետական ցուցանիշից ցածր է շուրջ 2 անգամ, իսկ մարզի քաղաքային համայնքներից՝ շուրջ 8.0 անգամ:

Գծանկար 9. Գործազրկության մակարդակը, 2015թ.



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016,
(http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

Աղյուսակ 11. Աշխատուժի առաջարկ, 2015թ. դեկտեմբեր

	Աշխատանք փնտրողներ		*նրանցից՝ գործազուրկներ*			
	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ		
Ընդամենը	88 928	21 962	77 004	19 007	25%	25%
Լոռի	**11 159**	**2 899**	**10 728**	**2 775**	**26%**	**26%**
Շիրակ	15 392	4 806	12 909	3 908	31%	30%
Տավուշ	5 916	2 032	5 220	1 818	34%	35%

Աղբյուրը՝ ԱՎԾ վերլուծություն, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին» զեկույց, Հղումը՝ (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf)

72. 2015թ. ՀՀ Լոռու մարզում աշխատանք փնտրողների 96.1%-ը գործազուրկներ են, որից 25.9%-ը՝ երիտասարդներ, այն դեպքում երբ հանրապետական միջին ցուցանիշում աշխատանք փնտրողների 86.6%-ն է գործազուրկ, որից 24.7% երիտասարդներ:

Աղյուսակ 12. Աշխատանք փնտրողներ և աշխատանքով ապահովվածներ, 2015թ. մարդ

	Աշխատանք փնտրողներ, մարդ			Աշխատանքով ապահովվածներ, մարդ		
	2013	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**
ՀՀ	65 199	72 606	88 928	12 659	11 495	10 073
ԼՈՌԻ	**7 334**	**8 503**	**11 159**	**1 005**	**1 153**	**1 179**
ՇԻՐԱԿ	8 964	11 496	15 392	967	983	1 006
ՏԱՎՈՒՇ	4 147	4 811	5 916	598	511	536

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, Հղումը՝ (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

73. ՀՀ Լոռու մարզում աշխատանքի տեղավորվածների քանակը 2015թ. կազմում է աշխատանք փնտրողների 10.6%-ը, այն դեպքում, երբ 2013թ.-ին աշխատանքի տեղավորվել են աշխատանք փնտրողների 13.7%: 2015թ.-ին մարզում 4.1%-ով ավելի շատ են աշխատանքով ապահովվածները, քան ՀՀ Շիրակի մարզում: Հանրապետության ցուցանիշները նույնպես ունեն նվազման միտումներ, 2013թ. այս ցուցանիշը կազմել է 19.42% և նվազել մինչև 2015թ. հասնելով 11.33%:

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

74. 2015թ. մարզի արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառներում գրանցված 18037 կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից տնտեսական գործունեություն են ծավալել 8593-ը (47.6%), որից՝ 495-ը արդյունաբերության ոլորտում: 2011թ. նկատմամբ մարզի ՀՆԱ-ի աճը կազմել է 145.6%, իսկ արդյունաբերության ոլորտում 154.6%: Նույն ժամանակաշրջանում նշված բնագավառներում աշխատողների թիվը նվազել է 84.8%, կազմելով 18875 մարդ, իսկ արդյունաբերությունում աշխատողների միջին ցուցակային թիվը աճել է 106.6%-ով, կազմելով 6884 մարդ:

75. Արդյունաբերության ոլորտի վերլուծությունից պարզ է դառնում, որ մարզի կազմակերպությունների մեծամասնությունը ՓՄՁ-ներ են, սակայն արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում շուրջ 76%-ը բաժին է ընկնում 9 խոշոր արդյունաբերական կազմակերպություններին, փոքր և միջին բիզնեսին՝ 24%-ը:

76. 2015թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերության 8.9%, գյուղատնտեսություն՝ 7.5%, շինարարություն՝ 5.6%, մանրածախ առևտուր՝ 3.6% և ծառայություններ՝ 1.5%: Հաշվի առնելով մարզի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ բնակչության կազմում՝ 7.5% է, պարզ է դառնում, որ մարզի արդյունաբերության զարգացվածության աստիճանը ավելի բարձր է քան

միջին հանրապետության ցուցանիշը, գյուղատնտեսության ցուցանիշը հավասար է հանրապետության միջինին, մնացած ցուցանիշներով մարզը ցածր է գտնվում հանրապետության միջին ցուցանիշներից:

Գծանկար 10. ՀՀ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները, 2015թ.



Աղբյուրը՝ ԱՎԾ - ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ http://armstat.am/am/?nid=81&id=1834)

77. Արդյունաբերություն: ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է (կենտրոնացված Թումանյանի տարածաշրջանում): Արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական (միակ մարզը ՀՀ հյուսիսային մարզերից), մշակող (մասնավորապես՝ մետաղագործական և սննդի) և թեթև արդյունաբերություններն են (Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):
78. Մարզի արդյունաբերության ընդհանուր ծավալում հանքարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 45.7%, մշակող արդյունաբերությանը՝ 43.8%, էլեկտրական էներգիայի արտադրությանը՝ 9.6%, ջրամատակարարմանը և այլ ճյուղերինը՝ 0.9%:

Գծանկար 11. ՀՀ Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ արտադրանքի ծավալում (2011-2015թթ.)

(%)



Աղբյուրը՝ ԱՎԾ – ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf

79. 2015թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2011թ. համեմատությամբ աճել է 163.7%-ով, հանրապետության 132.8%-ի, ՀՀ Շիրակի մարզի 95.4%-ի և ՀՀ Տավուշի մարզի 161.7%-ի դիմաց: Միայն 2015թ. ընթացքում մարզի 4 արդյունաբերական կազմակերպություններ դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ 6-ը սկսել են արտադրանք թողարկել:

80. 2015թ. մարզում գործել են 25 փոքր ՀԷԿ և 1 հողմակայան, որոնք արտադրել են 207.3 մլն ԿՎտ/ժամ էլեկտրական էներգիա, աճը 2014թ. նկատմամբ կազմել է 125.6%: ՀԷԿ-ի արտադրանքը կազմում է հանրապետության ՀԷԿ-ի արտադրանքի 9.2%:

81. Մարզում առկա են մետաղական հանքավայրեր (պղինձի, ոսկու, մոլիբդենի, բազմամետաղների, ֆելզիտային և դացիտային տուֆեր, հանքային ջրեր և այլն): Մարզում մետաղական հանքավայրերը ներկայացված են պղինձի, ոսկու, մոլիբդենի և բազմամետաղների հանքավայրերով, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոները հիմնականում ներկայացված են գրանիտներով, բազալտներով, ֆելզիտային և դացիտային տուֆերով, հանքային և քաղցրահամ աղբյուրներով և այլն:

82. Հիմնախնդիր են հանդիսանում գործող կազմակերպությունները, որոնք աշխատում են հիմնականում իրենց հզորությունների 15-30% սահմաններում, ունեն վերազինման կարիք նոր սարքավորումներով և տեխնիկայով, ինչպես նաև նոր շուկաների բացահայտման:

83. Գյուղատնտեսություն: ՀՀ Լոռու մարզում առկա է շուրջ 39.7 հազար գյուղացիական, 23 ֆերմերային խոշոր տնտեսություններ, որոնցից 4-ը հողագործական, 2-ը՝ թռչնաբուծական, 17-ը՝ անասնաբուծական: Մարզում զարգացած է մեղվաբուծությունը, կաթի, պտուղ-բանջարեղենի վերամշակումը:

Աղյուսակ 13. ՀՀ Լոռու մարզի անասնագլխաքանակը 2011-2016թթ. հունվարի 1-ի դրությամբ (գլուխ)

Անվանում	2011	2012	2013	2014	2015	2016
Խոշոր եղջերավոր կենդանիներ	69 126	72 086	78 891	79 070	81 003	81 769
որից՝ կովեր	33 318	35 578	38 525	38 379	39 694	40 864
Մանր եղջերավոր կենդանիներ	27 416	18 197	28 104	32 883	38 252	37 919
Խոզեր	8 355	7 091	13 551	11 164	10 952	15 358
Թռչուններ	140 832	130 080	135 250	141 622	155 227	273 086
Մեղվաընտանիքներ	24 986	24 207	23 245	24 453	24 303	25 512
Ձիեր	2 468	2 416	2 587	2 736	2 452	2 572

84. 2015թ.-ին գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը 2011թ.-ի նկատմամբ աճել է 131.7%-ով:

Աղյուսակ 14. ՀՀ-ում, ՀՀ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը, 2011-2015թթ.

(ՀՀ դրամ)

	2011	2012	2013	2014	2015	2015թ. աճը 2011թ. նկատմամբ (%)
ՀՀ	263123	278007	304630	330001	333889	126.9
Լոռի	**242360**	**244567**	**292461**	**323684**	**334222**	**137.9**
Շիրակ	368901	374055	428111	442370	450247	122.0
Տավուշ	302488	314887	343260	358326	366534	121.2

Աղբյուրը՝ ԱՎԾ - ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016
Հղումը՝ (http://armstat.am/file/article/marz_2016_11.pdf)

85. ՀՀ Լոռու մարզում 2015թ. մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը գրեթե հավասար է հանրապետական միջին ցուցանիշին, սակայն 1.3 անգամ զիջում է ՀՀ Շիրակի մարզի և 1.1 անգամ ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշներին: 2015թ.-ին 2011թ-ի համեմատությամբ մարզում մեկ շնչին ընկնող համախառն գյուղատնտեսական արտադրանքը ավելացել է 137.9%-ով:

Գծանկար 12. ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արտադրանքի ծավալում (2011-2015թթ.)

(%)



Աղբյուրը՝ ԱՎԾ - ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_11.pdf)

86. 2011թ. համեմատությամբ ՀՀ Լոռու մարզի հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները 2015թ. ավելացել են 164.7%-ով, միջին հանրապետական 127.5% աճի դիմաց: Սակայն մշակաբույսերի միջին բերքատվությունը զիջում է հանրապետական միջին ցուցանիշներին, որի պատճառները հիմնականում ինտենսիվ տեխնոլոգիաների, մարզի կլիմայական պայմաններին հարմարեցված սերմացուների բացակայությունն է, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը:

87. Մարզի 23 համայնքներում կա 40 հակակարկտային կայաններ, որը բավարար չէ մարզի ցանքատարածությունները պաշտպանելու բնական աղետներից:

88. 90-ականների հետ համեմատ մարզում կրճատվել է պտղատու այգիները (2.3 հազար հա): Վերջին հինգ տարում մարզի ոռոգման համակարգի բարելավման համար կատարվել է ավելի քան 550 մլն դրամի ներդրումներ: Սակայն այսօր էլ մարզի ավելի քան 9 610 հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 2.5-3.0 հազ. հա:

89. 2016թ. հունվարի 1-ի դրությամբ 2011թ. համեմատությամբ մարզում խոշոր եղջերավոր կենդանիների թիվը աճել է 118.3%-ով, որից կովեր՝ 122.6%-ով: Տաշիրի դաշտավայրը ալպիական գոտի է: Այստեղ են պատրաստվում հանրահայտ «Լոռի» և «Զանախ» պանիրները:

90. ՀՀ վարչապետի մոտ կայացած մարզերի ներդրումային ծրագրերի քննարկման արդյունքում՝ ֆինանսավորվել է գյուղատնտեսական արտադրանքներ վերամշակող «Ռոզֆռուտ» ՍՊԸ-ի ներկայացրած զարգացման ծրագիրը:

91. Որպես աղետի գոտի, մարզում վերջին տարիներին զգալի աշխատանքներ են տարվել **շինարարության** ոլորտում: 2016թ.[1] հիմնական միջոցների գործարկման ծավալը մարզում կազմել է 6168.9 մլն դրամ, որը 2011թ. մակարդակը գերազանցել է 39.2%-ով, այն դեպքում, երբ այն հանրապետությունում նվազել է 17.2%-ով: Հիմնական միջոցների գործարկման ամենամեծ ծավալը մարզում եղել է 2014թ. 100 749.9 մլն դրամ, երբ շահագործվել է «Թեղուտ» ՓԲԸ-ն: Մեկ շնչի հաշվով շինարարության ծավալը 2016թ.[1] մարզում կազմել է 75 869 դրամ, միջին հանրապետական 133 186 դրամի դիմաց:

92. Առևտուր և ծառայություններ: ՀՀ Լոռու մարզում գործում է 1010 մանրածախ առևտրի օբյեկտ, շրջանառությունը 2016թ.[1]-ին կազմել է 39 756.6 մլն դրամ, իսկ տեսակարար կշիռը հանրապետության առևտրի ծավալում կազմել է 3.2%, 2011թ. 1.9%-ի դիմաց: Միջին հաշվով մարզի մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը կազմել է 178 280.7 դրամ, միջին հանրապետական 415 559.7 դրամի դիմաց: Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ կազմում է 42.9%, ՀՀ Շիրակի մարզի 47.5%-ի և ՀՀ Տավուշի մարզի 49.5%-ի դիմաց: ՀՀ Լոռու մարզի ծառայությունների ծավալը 2016թ.[1] կազմել է 15 770.6 մլն դրամ, որի տեսակարար կշիռը հանրապետության ծառայությունների ծավալում կազմել է 1.2%, 2011թ. 1.8%-ի դիմաց կամ նվազել է 0.6%-ային կետով: Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում 2016թ.[1] կազմել է 70720.2 դրամ, որը միջին հանրապետականից ցածր է 6.0 անգամ, այն զիջում է Երևան քաղաքին 13.4 անգամ:

93. Զբոսաշրջություն: Մարզում գործում են 16 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 1600/2000 մարդ/օր հզորությամբ: 2011թ.-ի դրությամբ դրանց թիվը կրկնապատկվել է: Հյուրատների թիվը արագորեն աճում է հատկապես գյուղական համայնքներում: Զբոսաշրջիկների թիվը վերջին 3 տարում եռապատկվել է (շուրջ 90.0 հազ. զբոսաշրջիկ), որոնցից 21.7%-ն են միայն օգտվել հյուրանոցային ծառայություններից: Հյուրանոցային տնտեսությունների թվով ՀՀ Լոռու մարզը զիջում է ՀՀ Տավուշի մարզին: Ոլորտի զարգացման համար բազմաթիվ միջազգային ծրագրերով վերջին 5 տարիներին ստեղծվել են զբոսաշրջային 5 կենտրոններ Ալավերդի, Դսեղ, Ստեփանավան, Սպիտակ, Փամբակ համայնքներում:

94. Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շահագործումը լայն հնարավորություն է մարզը դարձնելու տարածաշրջանային բարձր տեխնոլոգիաների միջազգային կենտրոնի: Այն ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում: 2016թ.-ին ՎՏԿ-ի ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են ավելի քան 2000 աշակերտ-ուսանողներ, և ստեղծվել 4 նոր ընկերություններ: Նախատեսվում է Վանաձորում ԹՈՒՄՈ կենտրոնի մասնաճյուղի հիմնում: Նոր տեխնոլոգիաների ներդրմամբ մարզի գյուղական կյանքի ակտիվացմանն ուղղված, Դեբետ համայնքի հովտում կառուցվում է ՀՀ-ում առաջին Սմարթ կենտրոնը՝ Հայաստանի մանուկներ հիմնադրամի նախաձեռնությամբ (ծրագրի արժեքը՝ շուրջ 5.0 մլն դոլար):

95. Արտահանում: 2015թ. արտաքին ապրանքաշրջանառությունը մարզում ունի այսպիսի տեսք՝ արտահանում 164.4 մլն դոլար, ներմուծում՝ 72.0 մլն դոլար: Մարզի արտահանման ծավալները 2011թ. նկատմամբ աճել են շուրջ 1.12 անգամ, իսկ ներմուծման ծավալները կազմում են 2011թ. շուրջ 83%: ՀՀ Լոռու մարզի արտահանումը կազմում է ՀՀ արտահանման շուրջ 11.1%-ը: Մարզից հիմնականում արտահանվում է կոնվերտորային (սև) պղինձ, պղնձի խտանյութ, գազակտրիչ սարքեր, հագուստ, պանիր, պահածոներ և այլն: Մարզի արդյունաբերական արտադրանքի 66.8 %-ն արտահանվում է ԱՊՀ և այլ երկրներ:

[1] 2016թ. ցուցանիշը նախնական է <<Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-դեկտեմբեր>>: Վերջնականը՝ համաձայն <<2017թ. պետական վիճակագրական աշխատանքներ ծրագրի>> կհրապարակվի ս/թ. հոկտեմբեր ամսին << ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով>>:

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

96. ՀՀ Լոռու մարզում գործում են 66 նախադպրոցական ուսումնական հաստատություններ (ՆՈՒՀ) 151 խմբով, որից 37-ը գործում են քաղաքային, 29-ը՝ գյուղական բնակավայրերում, 2011թ.-ի դրությամբ ՆՈՒՀ-երի քանակն ավելացել է 7-ով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 2015թ.-ին մարզում կազմել է 4474 երեխա, որից քաղաքային բնակավայրերում 3451 երեխա (77.1%), գյուղական բնակավայրերում՝ 1023 երեխա (22.9%): 2015թ.-ի դրությամբ ՆՈՒՀ հաճախող երեխաների թվի աճը 2011թ.-ի նկատմամբ կազմել է 121.3%, որը միջին հանրապետականից բարձր է 7.4%-ով: Երեխա-մանկավարժ հարաբերակցությունը 2015թ.-ին կազմում է 12.6/1 հանրապետական միջինի 12.1/1-ի դիմաց: 10.0 հազ. բնակչի հաշվարկով, 2015թ.-ին մարզում ՆՈՒՀ-երի թիվը հանրապետական միջինից բարձր է 8.1%-ով, սակայն զիջում է ՀՀ Տավուշի մարզի ՆՈՒՀ-երի քանակին 1.6 անգամ, հաճախող երեխաների թիվը 2015թ.-ի դրությամբ մնում է ցածր՝ 198.84, զիջելով հանրապետական միջինին 21%-ով:

Գծանկար 13. ՀՀ Լոռու մարզի համայնքային և գերատեսչական նախադպրոցական հաստատություններում երեխաների թվաքանակը ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2011-2015թթ.



Աղբյուրը՝Ազգային վիճակագրության ծառայության տվյալների հիման վրա կատարած վերլուծություն

97. 2015թ.-ին ՀՀ Լոռու մարզում գործել է **166** պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, որից **68-ը՝** հիմնական, **83-ը՝** միջնակարգ, **13-ը՝** ավագ, **3-ը՝** հատուկ (դրանցից **2** հատուկ (օժանդակ) **1**-ը՝ հատուկ խորացված ուսուցմամբ) և **2** վարժարան: Ընդհանուր առմամբ 2015թ. ՀՀ Լոռու մարզի աշակերտների թվաքանակը (29625 աշակերտ) 2011թ.-ի նկատմամբ նվազել է 3506 աշակերտով (10.6%):

98. 2015թ. մարզի միջնակարգ կրթությամբ 2125 շրջանավարտներից ԲՈՒՀ և ՄՄՈՒՀ են ընդունվել 1043-ը (49.1%) միջին հանրապետական 57.2%-ի դիմաց: Ուսուցիչների քանակը 3518 է, որից կին՝ 3003-ը (85.4%), բարձրագույն կրթությամբ՝ 3269 ուսուցիչ (92.8%): Ոչ բարձրագույն կրթությամբ ուսուցիչների հիմնական մասն աշխատում է սահմանամերձ և քիչ թվով աշակերտ ունեցող գյուղական համայնքների դպրոցներում: Մարզի դպրոցներից 86-ի (51.8%) շենքային պայմանները համարվում է բարվոք, 47-ը (28.3%) կարիք ունի հիմնանորոգման, 33-ը՝ ընթացիկ նորոգման:

99. Մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա: Մասնավորապես՝ Վանաձորի թիվ 13,15,16,18,20,23,28, Գուգարքի ավագ և հիմնական, Դարպասի, Բազումի, Շահումյանի, Ձորագյուղի, Եղեգնուտի միջնակարգ դպրոցները,

ինչպես նաև Ալավերդու թիվ 3,5,6, Շնողի, ք. Թումանյանի, Ախթալայի թիվ 1,2 Թեղուտի, Լեռնապատի նախադպրոցական ուսումնական հաստատություններն ունեն վառարանային ջեռուցում:

Գծանկար 14. ՀՀ-ի, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների տեսակարար ցուցանիշները, 2015-2016 ուս. տարում



Աղբյուրը՝ ԱՎԾ - Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին http://armstat.am/file/article/soc_15_2.pdf

Աղյուսակ 15. Հանրակրթական դպրոցներ

Դպրոցներ, 2015/2016 ուսումնական տարում	Լոռի	Տավուշ	ՀՀ
Դպրոցների քանակը, ընդամենը	**166**	82	1,438
Դպրոցների քանակը, 10 000 բնակչի հաշվով	**7.38**	6.53	4.80
Աշակերտների թվաքանակը	**29 625**	15 993	364 398
Աշակերտների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	**1 316.67**	1 274.34	1 215.23
Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	**178.5**	195.0	253.4
Դասարանների քանակը մեկ դպրոցում	**11.7**	11.8	13.9
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	**15.3**	16.5	18.2
Մանկավարժների թվաքանակը	**3,518**	2,005	38,690
Մանկավարժների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	**156.36**	159.76	129.03
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	**8.4**	8.0	9.4
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը	**21.2**	24.5	26.9

Աղբյուրը՝ ԱՎԾ - Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին http://armstat.am/file/article/soc_15_2.pdf

100. 2017 թվականի դրությամբ ՀՀ Լոռու մարզում գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության երկու (2) նախնական (արհեստագործական) և տասը (10) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ, որոնցից երկուսում իրականացվում է նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագիր: Գործում է նաև 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին ցուցաբերվում է աջակցություն՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով:

101. Մարզում միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների թիվը 2015թ.-ին 1689՝ միայն միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տվյալներն են, 2011թ. նկատմամբ այն նվազել է 580-ով (25.6%): Մանկավարժադասախոսական անձնակազմի թվաքանակը կազմում է 313 մարդ: Ուսանողների 78.4%-ը սովորում է անվճար: Մարզում միջին մասնագիտական կրթական ուսումնական հաստատությունների ռացիոնալացման ծրագրի մշակման անհրաժեշտություն կա:

102. 2015 թվականի դրությամբ ՀՀ Լոռու մարզում գործում է թվով 4 (որից 2-ը մասնաճյուղ) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 3522 ուսանողներով, որոնցից 2185 կին, առկա ուսուցմամբ ուսանողների թիվը 1776 մարդ: ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1191-Ն որոշմամբ հաստատվել է բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը, որով ՀՀ բուհերում իրականացվում է ընդունելություն:

Գծանկար 15. ԲՈՒՀԵՐ



Աղբյուրը՝ ԱՎԾ - Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին (http://armstat.am/file/article/soc_15_6.pdf)

103. Մարզում գործում է նաև 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն 511 ուսանողներով, որից առկա ուսուցմամբ ուսանողներ՝ 143: Ըստ կրթական ցենզի հետբուհական և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը մարզում կազմում է գործազուրկների թվի 10.9%-ը, Վանաձորում՝ 15.2%, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 22.5%-ը, Վանաձորում՝ 20.8%-ը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 3.9%-ը, Վանաձորում՝ 1.8%-ը, միջնակարգ կրթություն ունեցողները՝ 62.7%-ը, Վանաձորում՝ 62.1%-ը:



Գծանկար 16. ՀՀ Լոռու մարզում գործազրկությունն՝ ըստ կրթական մակարդակի

104. Կրթության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործազուրկների ընդհանուր թվի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների թիվը (63%), որը պայմանավորված է նրանով, որ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները չունեն մասնագիտություն և որակավորում, որոնք մրցունակ չեն գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերի պահանջների բավարարման համար:

105. ՀՀ Լոռու մարզում կրթության ոլորտը կարևորվում է որպես կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը, ինչպես նաև տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն և, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կրթությունը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնն այսօր իրական հնարավորությունն է, նախկին հզոր տնտեսությունից դեռևս մնացած առկա մարդկային ներուժով հանդերձ, նոր շունչ հաղորդելու տարածաշրջանի

զարգացմանը՝ տնտեսության տարբեր ճյուղերում (քիմիա, սարքաշինություն, մեքենաշինություն, ռոբոտատեխնիկա և այլն):

3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

106. Տնային տնտեսությունների թիվը մարզում կազմել է 64 285, որից 41%-ը գյուղական բնակավայրերում և 59%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը 1790 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 2.8%-ը: Կիսակառույց տներում բնակվող տնային տնտեսությունների քանակը 955 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 1.6%-ը: Ընտանեկան նպաստառու ընտանիքների քանակը 20 319 է կամ մարզի ընդհանուր տնային տնտեսությունների շուրջ 31.6%-ը և հանրապետության նպաստառու ընտանիքների 19.1%-ը (2015թ.):

107. Բնակարանային պայմաններ և կենսապայմաններ: Մարզում առկա են 52931 բնակելի տներ և 2113 բազմաբնակարան շենքեր՝ 39038 բնակարաններով: Մարզի բնակարանային ֆոնդը 2015թ. կազմել է 9.2 մլն.մ^2 (քաղաքներում՝ 5.2 մլն.մ^2, գյուղերում՝ 4.0 մլն մ^2), որը կազմում է հանրապետության բնակարանային ֆոնդի 9.6%: Մարզի բնակչության ապահովվածությունն ընդհանուր բնակ.մակերեսով բարձր է ինչպես միջին հանրապետական ցուցանիշից 31.6 մ^2, այնպես էլ ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշից 36.4 մ^2, սակայն ցածր է ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշից 41.4 մ^2:

Աղյուսակ 16. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ

	Ընդամենը, մ^2			այդ թվում՝ բնակավայրերում					
				քաղաքային			գյուղական		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
ՀՀ	30.9	31.4	31.6	26.2	26.7	26.9	39	39.5	39.8
Լոռի	**38.4**	**39.7**	**40.2**	**37.2**	**38.5**	**38.8**	**40.1**	**41.6**	**42.1**
Շիրակ	40	40.5	41.4	34.6	34.1	35.2	47.5	49.5	50
Տավուշ	35.9	36.1	36.4	28.5	28.6	28.9	41.3	41.6	41.9

Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2015 թվականին (http://armstat.am/file/article/b_f_2016_1.pdf)

108. ՀՀ Լոռու մարզի գազաֆիկացման մակարդակը կազմում 77.6%, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզում գազաֆիկացված են 64118 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է մարզի բնակարանների և բնակելի տների 69.6%-ը: ՀՀ Շիրակի մարզում գազաֆիկացված է 75201 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է ՀՀ Շիրակի մարզի բնակարանների և բնակելի տների 73.6%-ը, իսկ ՀՀ Տավուշի մարզում գազաֆիկացված է 26673 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է մարզի բնակֆոնդի 63.3%-ն: Գազաֆիկացված չէ ՀՀ Լոռու մարզի բնակարանների և բնակելի տների շուրջ 31.4%-ը:

109. Մարզում վթարային շենքերում ապրող բնակիչների թիվը կազմում է 503 մարդ կամ մարզի բնակչության 0.2%-ը, տանիքի վերանորոգման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 27674 մարդ կամ մարզի բնակչության 12.3%-ը, ջրամատակարարման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 4760 մարդ կամ մարզի բնակչության 2.1%-ը, ջրահեռացման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 6784 մարդ կամ մարզի բնակչության 3.0%-ը:

110. Աղքատության մակարդակը ՀՀ Լոռու մարզում 2015թ.-ին աղքատության ցուցանիշը 36.2%, որը 2008թ.-ի համեմատ աճել է 2.0%-ային կետով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 6.4%-ային կետով, իսկ ՀՀ Շիրակի մարզում՝ նվազել է 2.9%-ային կետով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 15.5%-ային կետով, ՀՀ Տավուշի մարզում աղքատությունը աճել է 12.1%-ային կետով, հանրապետական ցուցանշից բարձր է 5.5%-ային կետով: Աղքատության մակարդակը ՀՀ Լոռու մարզում 2015թ.-ին 2012թ.-ի համեմատ նվազել է 2.5%-ային կետով,

աղքատության մակարդակը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 6.4%-ային կետով, իսկ ՀՀ Շիրակի մարզից ցածր է՝ 9.1%-ային կետով: Ծայրահեղ աղքատների 2012թ. համեմատությամբ նվազել է 0.6%-ային կետով, սակայն այն միջին հանրապետական ցուցանիշից բարձր է 0.8%-ային կետով:

Աղյուսակ 17. Աղքատության մակարդակը

(%)

	2012		2013		2014		2015	
	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ
Լոռի	**38.7**	**3.4**	**38.6**	**2.6**	**36.4**	**3.0**	**36.2**	**2.8**
Շիրակ	46.0	5.5	45.9	4.0	44.2	3.8	45.3	3.9
Տավուշ	27.5	1.9	27.7	2.5	30.6	2.7	35.3	2.0
ՀՀ միջին	32.4	2.8	32.0	2.7	30.0	2.3	29.8	2.0

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., http://armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

111. Սոցիալական պաշտպանություն և աջակցություն: 2015թ. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրով մարզի թվով 280 ընտանիքներին տրամադրված ֆինանսական աջակցության չափը կազմել է 42.2 մլն դրամ: 2016թ. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» 554 ընտանիքների տրամադրված ֆինանսական աջակցության չափը կազմել է 79.8 մլն դրամ:

Աղյուսակ 18. Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքներ

	Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը					Եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	83997	100879	103130	105176	106371	12361	10533	9666	9859	10512
Լոռի	**15933**	**19018**	**19471**	**19869**	**20319**	**1891**	**1815**	**1811**	**1760**	**2045**
Շիրակ	12696	15091	15150	15409	15258	1965	1588	1504	1445	1406
Տավուշ	3940	4899	5060	5106	5266	568	533	499	514	516

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին http://armstat.am/file/article/soc_15_12.pdf և http://armstat.am/file/article/soc_15_13.pdf

112. 2015թ. մարզի 45 384 թոշակառուներից 16 907 տղամարդ (37.2%), 28 477-ը՝ կին (62.8%) թոշակառուներ են: Մարզերից ամենաշատ կենսաթոշակառուներ բնակվում են ՀՀ Լոռու մարզում, որը կազմել է ՀՀ-ի կենսաթոշակառուների 10.0%-ը (2011թ.) և 9.7 %-ը (2015թ.): Մարզերից ամենաշատ հաշմանդամներ բնակվում են ՀՀ Լոռու մարզում 2015թ. այն կազմել է 21242 մարդ, 2011թ. 18169-ի նկատմամբ, որը կազմել է ՀՀ-ի հաշմանդամների 10.3%-ը (2011թ.) և 10.61%-ը (2015թ.):

113. Այս ուղղությամբ առանձին նպատակային ծրագրերը, մասնավորապես՝ տարածքային սոցիալական պլանները կնպաստեն իրենց հիմնական նպատակներից՝ բնակչության առողջության բարելավմանը հարցին մեծապես կօգնի ՀՀ կառավարության 12.01.2017թ. նիստի թիվ 1 արձանագրային որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրի և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների կատարումը:

Աղյուսակ 19. Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական, դրամ

	2011	2012	2013	2014	2015
Լոռի	**27 436**	**32 687**	**34 359**	**36 245**	**38 256**

Շիրակ	29 596	34 386	32 775	33 824	32 091
Տավուշ	32 022	33 648	31 713	28 247	30 374
Հանրապետական միջին	32 585	34 832	36 787	40 770	42 867

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 212 (http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

114. Մշակութային մատչելիություն: ՀՀ Լոռու մարզում գործում է 3 թատրոն, 38 մշակույթի տուն, որից՝ 25-ը գյուղական համայնքներում, 8 թանգարան, 9 երաժշտական, 8 արվեստի, 3 գեղարվեստի և 1 պարարվեստի դպրոցներ:

Աղյուսակ 20. ՀՀ Լոռու մարզում գործող գրադարանների և թանգարանների գործունեությունը

	2013	2014	2015
Գրադարաններ այցելուների թիվ	516200	496200	486600
Թանգարաններ այցելուների թիվ	23160	24142	-28978

Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին հղումը՝ (http://armstat.am/file/article/soc_15_25.pdf և http://armstat.am/am/?nid=82&id=1834)

115. Առողջապահական ծառայությունների մատչելիություն: Մարզում գործում են 31 բժշկական կազմակերպություններ՝ 5-ը համայնքային ենթակայության և 26-ը մարզպետարանի ենթակայության, որից՝ 1 հիվանդանոց, 5 բժշկական կենտրոններ, 1 դիսպանսեր, 1 առողջության կենտրոն, 4 պոլիկլինիկաներ, 1 արյան փոխներարկման կայան, 18 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, 95 բուժակ-մանկաբարձական կետեր: Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը ՀՀ Լոռու մարզում 6.2 օր է հանրապետականի 7.6 օրվա դիմաց: Մարզի ամբուլատոր համակարգը հիմնականում ապահովված է բժշկական (բացի որոշ նեղ մասնագիտական) և բուժքույրական կադրերով: ՀՀ Լոռու մարզում 10 000 բնակչի հաշվով բժիշկների թիվը 2015թ.-ին կազմել է 22.6, որը 2014թ.-ի համեմատ աճել է 0.8-ով, սակայն զիջում է հանրապետական միջին ցուցանիշին մոտ 2 անգամ, միջին բուժանձնակազմի թվաքանակը կազմել է 51.4, որը 2014թ.-ի համեմատ նվազել է 0.3-ով, ներհիվանդանոցային (ստացիոնար) տեղերի քանակը կազմել է 21.6, որը 2014թ.-ի համեմատ աճել է 0.3-ով:

116. Մարզի միջին բուժանձնակազմի, մահճակալների քանակությունները բավարարում են 10 000 բնակչի հաշվով առողջապահական ծառայությունների մատուցման համար, քանի որ 2014-2015թթ. մարզի բնակչությունը զգալի նվազել է:

Աղյուսակ 21. Առողջապահության հիմնական ցուցանիշները, 10 000 բնակչի հաշվով

	Բժիշկների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով		Միջին բուժանձնակազմի թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով		Հիվանդանոցային մահճակալների քանակը, 10 000 բնակչի հաշվով		Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը, 10 000 բնակչի հաշվով		Հաճախումների քանակը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, 1 շնչի հաշվով	
	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015
Լոռի	**21.8**	**22.6**	**51.7**	**51.4**	**21.3**	**21.6**	**2.0**	**2.0**	**3.8**	**3.9**
Շիրակ	22.1	23.4	58.0	57.4	35.6	36.1	1.3	1.3	3.4	3.5
Տավուշ	17.8	19.6	45.3	43.1	21.5	20.6	2.0	2.1	2.9	3.1
ՀՀ	42,8	43,7	60,0	58,8	41,6	41,8	1,7	1,7	3.9	4.0

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 109 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

117. Անմխիթար շենքային պայմաններում են գործում մարզկենտրոնի ամբուլատոր հատվածի 65%-ը (սպասարկում է ազգաբնակչության 47%), Տաշիրի տարածաշրջանի հիվանդանոցային և ամբուլատոր ծառայություններն ամբողջությամբ, մարզի առողջապահական ընկերությունների կազմում գործող գյուղական 95 բուժակ-մանկաբարձական կետերից 47.4% (ոմանք գործում են ժամանակավոր տնակներում): Մարզում լուրջ հիմնախնդիր է մանկական և մեծերի անհետաձգելի

շտապբուժօգնության կազմակերպումը: Ռեանիմոբիլ հրավիրվում է մայրաքաղաքից, մարզի 5 բժշկական կենտրոններում առկա շտապօգնության ավտոպարկը մաշված է բարոյապես և ֆիզիկապես: Դեռևս 45 ԲՄԿ-ներ կարիք ունեն վերանորոգման և վերակառուցման, այդ թվում 10 ԲՄԿ-ներ՝ կառուցման: ԲՄԿ-ներում բացակայում են շուրջօրյա ջրամատակարարումը, կոյուղին, ջեռուցման կենտրոնացված համակարգերը, կարող են բացասաբար անդրադառնալ սպասարկվող բնակչության առողջության վրա:

3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

118. **Օդային ավազան:** Մարզի օդային ավազանը աղտոտող խոշոր արդյունաբերական կազմակերպություններն են՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը, Թեղուտ ՓԲԸ-ն և այլ խոշոր ու միջին արդյունաբերական կազմակերպություններ: Ավտոտրանսպորտի շուրջ 70%-ը ներկայումս բենզինի փոխարեն աշխատում է բնական գազով, որն անհամեմատ ավելի քիչ է աղտոտում մթնոլորտը: Բնական այրվող ռեսուրսների պահպանության, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտումից զերծ պահելու համար անհրաժեշտ է հնարավորինս արագ և սահուն կերպով անցում կատարել վերականգնվող էներգիայի (արևային, քամու, հիդրո, երկրաջերմային) օգտագործմանը: ՀՀ Լոռու մարզում 1 բնակչի հաշվով մթնոլորտային տեսակարար արտանետումները 2015թ. կազմում է 206.9 կգ, որը ամենաբաձր ցուցանիշն է ՀՀ-ում, ՀՀ Շիրակի մարզի արտանետումները գերազանցում է 40.6 անգամ, 1 քառ. կմ հաշվով մարզի ցուցանիշը բարձր է ՀՀ Շիրակի մարզից 26.4 անգամ:

Աղյուսակ 22. ՀՀ, Լոռու, Շիրակի մարզերում մթնոլորտային արտանետումների տեսակարար ցուցանիշը, 2013-2015թթ.

	1 բնակչի հաշվով, կգ			1 քառ. կմ-ի հաշվով, կգ		
	2013	2014	2015	2013	2014	2015
Լոռի	**183.4**	**191.5**	**206.9**	**11 232.5**	**11 564.2**	**12 336.2**
Շիրակ	17.5	7.3	5.1	1 632.3	671.1	466.9
ՀՀ	39.6	42.6	42.9	4 204.6	4 510.5	4 528.7

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 161: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_14_19.pdf

119. ՀՀ Լոռու մարզում արտանետումների քանակը բարձր է հանքարդյունաբերության և մետալուրգիայի հաշվին: Մթնոլորտի աղտոտվածությունը մեղմելու նպատակով մարզի տարածքում վերջին տարիներին կատարվել է շուրջ 700հա անտառատնկման և կանաչապատման աշխատանքներ:

120. Ջրային ռեսուրսներ: ՀՀ Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Ջրի մանրէաբանական անալիզների հետազոտությունների տվյալները վկայում են, որ մարզի խմելու ջրի աղբյուրները ունեն բարձր որակական հատկանիշներ:

121. Վանաձոր քաղաքում գործում է կոյուղու մաքրման մեխանիկական–կենսաբանական կայան, որով անցնող կեղտաջրերի հոսքը կազմում է 30լ/վրկ, կատարվում է միայն մասնակի մեխանիկական մաքրում: Կեղտաջրերի մեծ մասը առանց մաքրման անմիջապես թափվում է Փամբակ գետը: Լոռու մարզում 2015թ. կոյուղի բաց թողնված կեղտաջրերի հեռացման ծավալը 2013թ.-ի համեմատ նվազել է 18%: Կեղտաջրերի մեծ մասը առանց մաքրման անմիջապես թափվում է Փամբակ գետը:

Աղյուսակ 23. Կեղտաջրերի հեռացում

(մլն.մ^3)

	Ընդամենը	այդ թվում՝

		աղտոտված (առանց մաքրման)	չափորոշային մաքուր	ոչ բավարար մաքրված
	2013			
Լոռի	**10.0**	**0.9**	**8.9**	**0.2**
Տավուշ	2.1	1.5	0.6	0.0
ՀՀ	937.7	65.0	798.9	73.8
	2014			
Լոռի	**13.2**	**4.7**	**7.0**	**1.5**
Տավուշ	1.4	1.4	0.0	0.0
ՀՀ	846.5	106.4	611.3	128.8
	2015			
Լոռի	**8.2**	**3.5**	**2.4**	**2.3**
Տավուշ	1.5	1.1	0.0	0.4
ՀՀ	810.8	132.2	559.8	118.9

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 165
Հղումը՝ (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

122. Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, որոնց ընդհանուր երկարությունը 3505կմ է, նրանցից միայն 55-ը (4,1%), ունեն 10 և ավելի կմ երկարություն: ՀՀ Լոռու մարզի գետերի ջրերը հիմնականում օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով:

123. Դեբեդ գետի խոշոր աղտոտողներից են համարվում մարզի խոշոր արդյունաբերական կազմակերպությունները:

124. Մարզում առկա են հետևյալ ջրագրական հուշարձանները՝

1) «Թռչկան» ջրվեժ
2) «Դսեղի Ծովեր» լիճ
3) «Շամլուղի լճակ»

125. Անտառներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, կենսաբազմազանություն: ՀՀ Լոռվա մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ: ՀՀ Լոռու մարզը հարուստ է անտառներով, որի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ: Մարզում գործում են 3 արգելավայրեր, 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ.

1) Մարգահովիտի մեզոֆիլ անտառներ,
2) Գյուլագարակի ռելիկտային սոճու անտառներ,
3) Մրտավարդենու (ռելիկտային մրտավարդի կովկասյան տեսակը),
4) Վանաձորի բուսաբանական այգի,
5) Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ,
6) Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկ:

126. ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ցանկում, ՀՀ Լոռու մարզից ընդգրկվել են 9 բնության հուշարձան՝ 165հա ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1059-Ա որոշմամբ հաստատվել է «Լոռու լճեր» պահպանվող լանդշաֆտի

ստեղծում» ծրագրային առաջարկը: Ծրագրի նպատակն է էկոհամակարգերի ամբողջականության պահպանությունը:

127. ՀՀ Լոռու մարզի հազվագյուտ և անհետացման եզրին հայտնված բույսերի, կենդանիների, սնկերի մամուռների, քարաքոսների գենոֆոնդի պահպանման, հաշվառման, ինչպես նաև վերարտադրության նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել և հասնել ՀՀ Լոռու մարզի Կարմիր Գրքի ստեղծմանը:

128. Անհրաժեշտ է հիմնադրել ժամանակակից տեխնոլոգիաներով տնկարանային տնտեսություններ:

129. Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր ՀՀ Լոռու մարզի հատուկ պահպանվող տարածքների ընդլայնման ուղղությամբ (Վանաձորի կիրճը, Տաշիր ու Մարգահովիտ համայնքների ջրաճահճային տարածքները և այլն):

130. Համայնքներում մշակել կլիմայի փոփոխությանը հարմարվողականության միջոցառումների պլաններ:

131. Համայնքների կայուն զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներդնել արդյունավետ ու ժամանակակից տեխնոլոգիաներ, սահմանափակելով ջրային էներգառեսուրսների օգտագործումն ու անցնել էներգիայի այլընտրանքային աղբյուրների կիրառմանը: Անշուշտ, առաջնահերթությունը պետք է տալ արևի անսպառ էներգիայի օգտագործմանը:

132. Անհրաժեշտ է խթանել կանաչ տեխնոլոգիաների ներդրումը (միջավայրապահպան, հողապահպան, անթափոն և այլն):

133. Մարզի 43 համայնքներում կազմակերպվում է կանոնակարգված աղբահանություն, մարզում գործող աղբավայրերը չեն համապատասխանում միջազգային չափորոշիչների պահանջներին:

134. Էներգախնայողություն: Մարզում առկա է հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ պոտենցիալ: ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ), Հաբիթաթ ֆոր հյումենթի Արմենիա հիմնադրամ, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, Քաղաքապետների դաշինք և այլն) ՀՀ Լոռու մարզի հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

135. ՀՎԷԷՀ «էներգախնայողության ծրագրի» շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում էներգախնայողության միջոցառումներ,
2) «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում էներգախնայողության միջոցառումներ,
3) Սպիտակի քաղաքապետարանում էներգախնայողության միջոցառումներ,

136. «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի լուսավորում (1.84 կմ երկարություն) և Թումանյան փողոցի լուսավորում (1.0 կմ երկարություն),
2) Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան փողոցի լուսավորում (1.35 կմ երկարություն) և Շահումյան փողոցի լուսավորում (0.9 կմ երկարություն),
3) Ստեփանավան քաղաքի փողոցային լուսավորում (1.99 կմ երկարություն),

137. ՎիվաՍել ՄՏՍ-ի «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Ամրակից համայնքի փողոցային լուսավորում,
2) Գուգարք մանկապատանեական ճամբարում էներգախնայողության միջոցառում:

138. Սպիտակ քաղաքն ընդգրկված է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում» ծրագրում, որի արդյունքում քաղաքի 27 բազմաբնակարան շենքերի տանիքներին

կտեղադրվեն արևային մարտկոցներ, կիրականացվի էներգախնայողության միջոցառումներ: Նախատեսվում է նմանատիպ ծրագրեր իրականացնել նաև մարզի Ստեփանավան, Ալավերդի քաղաքներում և Մեծ Պարնի համայնքում:

3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

139. ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը մարզում իրագործում է մարզպետը, համակարգում է գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մարզպետարանը կազմված է մարզպետի և մարզպետարանի աշխատակազմերից: Մարզպետարանի աշխատակազմն ունի 7 վարչություններ, 8 բաժիններ և 4 առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ:



140. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 2016թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 144 մարդ (151 պաշտոններից 7-ը թափուր են), որից 43.4%-ը կանայք են:

141. Մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներից 133-ը (93%) քաղծառայողներ են, աշխատակիցներից 128-ը (89.5%-ը) ունեն բարձրագույն կրթություն: 2010թ.-ից մարզպետարանում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային Mullberry համակարգի միջոցով: Այս համակարգով ապահովվում է մարզպետարան-համայնքապետարաններ էլեկտրոնային կապը: Դեռևս 2001թ.-ին հանրապետությունում առաջին անգամ ԵՄ աջակցությամբ ՏԱՍԻՍ-ի ծրագրով մարզպետարանում մշակվեց «Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր»: Ծրագրի շրջանակներում մարզպետարանը հագեցվեց համակարգչային տեխնիկայով: Մարզի համայնքապետարանների աշխատակազմերում աշխատում են 1217 աշխատողներ, (610 համայնքային ծառայողներով, որոնցից՝ 343 (56.2%) բարձրագույն կրթությամբ): Համայնքների 107 ղեկավարներից 4-ը (3.7%) կին են, իսկ 677 ավագանիներից՝ 135 կին (20%): Մյուս մարզերի հետ համեմատ ՀՀ Լոռու մարզում կանանց ներգավվածությունը տոկոսային արտահայտությամբ ամենաբարձր ցուցանիշն է: Համայնքների ղեկավարներից 60-ը (56.1%) բարձրագույն կրթությամբ, 2-ը՝ թերի բարձրագույն,

մյուսները՝ միջին մասնագիտական և միջնակարգ: Համայնքների ավագանիներից 224-ը (33.1%) ունեն բարձրագույն կրթություն, 5-ը թերի բարձրագույն, 158-ը (23.3%)-ը միջին մասնագիտական, մյուսները՝ միջնակարգ և 8-ամյա:

142. Մարզպետարանի և համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները դարձել են կարողությունների զարգացման շարունակական գործընթաց:

143. 2016թ. մարզի համայնքներում նախատեսված 6 997 274.0 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 6 324 737.2 հազ. դրամով կամ 90.4%-ով, որից վարչական բյուջեի մասով նախատեսված 6 205 807.2 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 5913899.9 հազ. դրամ կամ 95.3%-ով, ֆոնդային բյուջեով նախատեսված 910 754.7 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 494078.7 հազ. դրամ կամ 54.2%:

144. 2016թ. մարզում քաղաքային և գյուղական համայնքների աշխատակազմերի պահպանման համար նախատեսված 229 6738.4 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 2 129 501.4 հազ. դրամով կամ 92.7%-ով, որից վարչական բյուջեի մասով 2 129 471.2 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 2 025 886.0 հազ. դրամով կամ 95.1%-ով, ֆոնդային բյուջեով նախատեսված 167 267.2 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 103 615.4 հազ. դրամ կամ 61.9%:

145. ՀՀ Լոռու մարզի տնտեսական զարգացման ծրագրերի կազմման, համայնքներում իրականացվող ծրագրերի գործընթացներում մեծ դերակատարություն ունեն մարզում գործող մարզային գործարար միությունները և հասարակական կառույցները:

146. ՓՄՁ պետական աջակցության ծրագրեր ՀՀ Լոռու մարզում 2004թ.-ից իրականացվում են ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի միջոցով: Մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ համագործակցված աշխատանքի արդյունքում 2015թ.-ին 2011թ.-ի նկատմամբ եռապատկվել են իրականացվող ծրագրերի քանակը և ծավալները: ՄԱԿ-ի արդյունաբերական հիմնադրամի կողմից որպես պիլոտային ծրագիր ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում 2013-2016թթ. իրականացվում է երիտասարդ ձեռներեցների աջակցման ծրագրեր մարզպետարանների և ՓՄՁ ԶԱԿ մարզային գրասենյակի անմիջական մասնակցությամբ:

147. Արտաքին կապեր: Մարզը համագործակցում է մի շարք երկրների տարածքային միավորների հետ, մասնավորապես՝ Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ, Շվեդիայի Հանրապետության Ուփսալա նահանգի, Բելառուսի Հանրապետության Վիտեբսկ շրջանի, Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի հետ, այլ միջազգային կառույցների հետ (Եվրոպական Ռեգիոնների միջազգային ասամբլեայի, Ֆրանկոֆոնիայի Միջազգայի ասոցիացիայի անդամ):

3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

148. Սպորտի ոլորտ: ՀՀ Լոռու մարզում գործում են 19 մարզադպրոց, մի շարք մարզական ակումբներ, ընկերություններ, հասարակական կազմակերպություններ: Տարբեր մարզական թիմերում և խմբակներում ընդգրկված են մոտ 7000 երեխա: ՀՀ Լոռու մարզը թե հանրապետական և թե միջազգային ասպարեզներում միշտ աչքի են ընկել իր մարզական հաջողություններով: 2016թ. Վանաձորում բացվեց ֆուտբոլի ակադեմիա, ինչը նոր խթան կհանդիսանա մարզում ֆուտբոլ մարզաձևի զարգացման գործում:

149. Նախատեսվում է Վանաձորի մարզադաշտի վերակառուցում (կխթանի ֆուտբոլ մարզաձևի զարգացմանը, թիմերը հնարավորություն կունենան խաղալ ՀՀ առաջին և բարձրագույն խմբի առաջնություններում) և Վանաձորի ճոպանուղու վերակառուցում (կխթանի ձմեռային մարզաձևերի զարգացմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը):

150. Քաղաքաշինական ոլորտի խնդիրները մարզում: ՀՀ Լոռու մարզի քաղաքները հանրապետությունում կարևորվել են մեքենաշինության, քիմիական և թեթև արդյունաբերության, շինարարական իրերի արտադրության, բազմաթիվ շինարարական կազմակերպությունների առկայությամբ:

151. Մարզում առկա են 3-րդ կարգի վնասվածության 128 բազմաբնակարան բնակելի շենքեր: Անավարտ մնացած տարբեր աստիճանի պատրաստվության 282 բնակելի շենքեր: Վերանորոգման ենթակա են 730 բազմաբնակարան բնակելի ֆոնդ:

152. Մարզի 107 համայնքներից գլխավոր հատակագծեր ունեն 7-ը (6.5%):

153. 2016-2025թթ. մարզում քաղաքաշինության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է՝ 3-րդ կարգի վնասվածության 128 բազմաբնակարան բնակելի շենքերի տեխնիկական հետազննում, շենքերի կարգավիճակի որոշում, ամրացման ենթակա շենքերի ամրացում:

154. Ուսումնասիրել անավարտ բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանը, որոշել դրանց ավարտման նպատակահարմարությունն և ավարտման առաջնահերթությունները կապված քաղաքաշինական միջավայրի ամբողջականացմանը:

155. Ավարտման ոչ ենթակա շինությունների քանդում, ապամոնտաժում, տարածքների ազատում հետագա քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար:

156. Հաշվի առնելով նախկինում գոյություն ունեցող շինարարական ինդուստրիայի ավանդույթները, անհրաժեշտ է մոդեռնիզացնել և վերաշահագործել շինարարական իրերի, կոնստրուկցիաների և շինարարական նյութերի արտադրությունը, շինարարական ինդուստրիայի զարգացման և շինարար մասնագետներով ապահովելու համար:

157. Վերանորոգման-վերակառուցման ենթակա 730 բնակելի շենքերի հետազոտություններ, տանիքների, շքամուտքերի, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, վերելակների վերականգնում-վերանորոգում: Արդյունքում կբարելավվի շենքերի երկարակեցությունը և բնակիչների սոցիալ-կենցաղային պայմանները:

158. Վերը նշված շինարարական աշխատանքների կատարումը կնպաստի շինարարական նյութերի ու կոնստրուկցիաների արտադրության ծավալի, շինարարությունում աշխատատեղերի աճին:

159. Մարզի ակտիվ սողանքային տարածքների և քարաթափումների ուսումնասիրություններ, քարտեզագրում, ռիսկերի գնահատում, համապատասխան պաշտպանիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, որը կապահովի մարզի ենթակառուցվածքների և վտանգավոր տարածքների հարակից շինությունների անվտանգ շահագործում:

160. **Մարզի սահմանամերձ գոտիներում անտառների, բուսական և կենդանական աշխարհի արդյունավետ վերականգնում, պահպանություն և վերարտադրություն:** Մարզի Ջիլիզա համայնքի Վրաստանի հետ սահմանամերձ անտառներին արգելոցի կարգավիճակ տալը կնպաստի տեխնածին, ինչպես նաև կլիմայի փոփոխությամբ պայմանավորված անտառային մեծածավալ հրդեհների ծավալների խիստ կրճատմանը, մեծ անկման անկյուն ունեցող լանջերի էրոզիոն, հեղեղային և սելավա-սողանքային երևույթների նվազմանը, բուսական և կենդանական աշխարհի անցանկալի փոփոխությունների կանխարգելմանը, որոշ էնդեմիկ և արժեքավոր տեսակների իսպառ վերացման վտանգի նվազեցմանը, անտառների ոչնչացման հետևանքով սևահողի լվացման նվազեցմանը և այլն: Անհրաժեշտ է ապահովել ՀՀ Լոռու մարզի համայնքները գլխավոր հատակագծերով և գոտևորման նախագծերով:

162. Մարզի սահմանամերձ գոտիներում անտառների, բուսական և կենդանական աշխարհի արդյունավետ վերականգնում, պահպանություն և վերարտադրություն: Մարզի Վրաստանի հետ Ջիլիզա համայնքի սահմանամերձ անտառներին արգելոցի կարգավիճակ տալը կնպաստի տեխնածին, ինչպես նաև կլիմայի փոփոխությամբ պայմանավորված անտառային մեծածավալ հրդեհների ծավալների խիստ կրճատում, մեծ անկման անկյուն ունեցող լանջերի էրոզիոն, հեղեղային և սելավա-սողանքային երևույթների ակտիվացման նվազմանը, բուսական և կենդանական աշխարհի անցանկալի փոփոխություններ, որոշ էնդեմիկ և արժեքավոր տեսակների իսպառ վերացման վտանգ նվազեցմանը, անտառների ոչնչացման հետևանքով սևահողի լվացում և վերարտադրության խիստ նվազեցմանը:

IV. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

Ուժեղ կողմեր/հնարավորություններ	Թույլ կողմեր/սպառնալիքներ
1. Բնական պայմաններ, ժողովրդագրական իրավիճակ և քաղաքների զարգացում	
• Քաղաքային բնակչության մեծ քանակություն • Խիտ բնակեցվածությունը • Խոշոր քաղաքների առկայությունը, որպես ծառայությունների մատուցման, կրթության և առողջապահական կենտրոններ • Թումանյանի տարածաշրջանը, որպես լեռնարդյունաբերական աճի բևեռ • Տաշիրի տարածաշրջան, որպես անասնապահության և կաթի վերամշակման աճի բևեռ	• Մահացությունների բարձր մակարդակ • Արտագաղթ • Բնակչության ծերացում • Չօգտագործվող, քայքայված հետինդուստրիալ տարածքների առկայություն • Մարզի, որպես հանգստյան գոտու հնարավորությունների օգտագործման ոչ բավարար մակարդակ • Քաղաքային բնակչության նվազում • Մարզի տարածաշրջանների անհամաչափ բնակեցվածություն
• Հանգստի կազմակերպման համար Բարենպաստ բնակլիմայական պայմաններ, անտառների մեծ տեսակարար կշիռ • Քաղցրահամ և հանքային ջրերի բավարար պաշարներ • Բազմազան օգտակար հանածոների հանքավայրեր • Մեծաքանակ հուշարձաններ ու կոթողների առկայություն, այդ թվում ընդգրկված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: • Գյուղատնտեսության (մասնավորապես անասնապահության) համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ • Վանաձոր քաղաքում չօգտագործվող արտադրական տարածքների առկայություն • Մարզի չօգտագործվող հանգստյան գոտիների առկայություն	• Սեյսմիկ վտանգավորության գոտում գտնվելը • Սողանքավտանգ տարածքների առկայությունը • Շրջակա միջավայրի աղտոտում հանքարդյունաբերության թափոններով
2. Տրանսպորտ, կապ և տեղեկատվություն	
• Տրանսպորտային միջոցների և երթուղիների մատչելիությունը մարզի բնակչության 95%-ի համար • Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի առկայությունը մարզում	• Տրանսպորտային միջոցների մաշվածություն • Պատահարների քանակության կտրուկ աճ, ուղեկցվող զոհերի և վիրավորների քանակի աճով
• Հանրապետական մայրուղիների խաչմերուկում գտնվելը • Ստեփանավան և Օձուն համայնքների օդանավակայանների շահագործումը կարող է դառնալ մարզի զբոսաշրջության զարգացման գրավականներից մեկը:	• Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիության ցածր մակարդակ

3. Հանրային ենթակառուցվածքներ	
• Լավ զարգացած ճանապարհային ցանց • Մարզի գրեթե ողջ տարածքով անցնող երկաթուղու առկայություն • Համայնքների 77.6%, կամ մարզի 97.0% բնակչության բնակվելու վայրերի գազաֆիկացում • Համայնքների զգալի մասում շուրջօրյա ջրամատակարարում	• Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճան, մասնավորապես Մարզային (տեղական) • Տուրիստական ենթակառուցվածքների վատ վիճակ, այդ թվում հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների ոչ բավարար քանակություն • Ջրահեռացման համակարգի բարձր մաշվածություն • Կեղտաջրերի մաքրման կայաններին չմիացված կոյուղագծերի առկայություն
• Մարզում առկա հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ ներուժը	• Մարզի ճանապարհների որոշ մասի ռիսկային և դժվարանցանելի վայրերով անցնելը, ձմեռային ամիսներին փակվելու վտանգի առկայությունը
4. Ներքին արտադրանք և եկամուտներ	
• Մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի բարձր տեմպեր • Արդյունաբերության աճի մեծ տեմպեր	• Մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցածր մակարդակ • Ընտանեկան եկամուտի ցածր մակարդակ • Ծայրահեղ աղքատների բարձր մակարդակ • Մարզի զբոսաշրջության ներուժի թերի օգտագործում
•	•
5. Զբաղվածություն	
• Տնտեսապես ակտիվ բնակչության բարձր մակարդակ հանրապետական միջինից • SS ոլորտի աճ, SS ոլորտում աշխատուժի պահանջարկ • Կրթություն ունեցող անձանց, երիտասարդ կադրերի մեծ թիվ • Արագ տեմպերով զարգացող թեթև արդյունաբերություն	• Տնտեսապես ակտիվ բնակչության արագ նվազում • Քաղաքային գործազրկության բարձր մակարդակ • Ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի պակաս • Աշխատաշուկայի պահանջներին անհամապատասխան կրթություն ունեցող երիտասարդների մեծ թիվ • Ինտենսիվ գյուղատնտեսության, SS ոլորտի, տուրիզմի և հանքարդյունաբերության ու վերամշակման արդյունաբերության մասնագետների ոչ բավարար քանակ աշխատաշուկայում
• Արագ զարգացող թեթև արդյունաբերություն • Արագ զարգացող SS ոլորտ	• Կրթական համակարգի և աշխատաշուկայի անհամապատասխանություն
6. Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	
• Անասնապահության և նրա արտադրանքի վերամշակող ճյուղի աճ • Հանքարդյունաբերության աճ	• Գյուղատնտեսության ենթակառուցվածքներից՝ մեքենատրանսպորտային պարկերի բացակայություն, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճան • Գյուղատնտեսական նշանակության հողերի

	մասնատվածությունը, մեքենայացման ցածր մակարդակը, • Գյուղմթերքների վերամշակման կազմակերպությունների ոչ բավարար քանակություն • Գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք
• Հանքարդյունաբերության համար առկա բարենպաստ պայմաններ • Բերրի հողերի մեծ տեսակարար կշիռ • Տուրիզմի զարգացման մեծ հնարավորություն	• Տուրիզմի, ինտենսիվ գյուղատնտեսության և հանքարդյունաբերության զարգացման ռիսկեր
7. Կրթություն, մարդկային կապիտալ	
• Համընդհանուր անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության մատչելիություն/հասանելիություն • Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն • Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն • Նախակրթարանների առկայություն • Գրագետ երիտասարդություն	• Կրթության և շուկայի անհամապատասխանություն • Կրթություն ստացած երիտասարդների գործնական հմտությունների և կարողությունների ցածր մակարդակ • Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ
• Երիտասարդ կադրերի ինքնահիրացման հաստատությունների ստեղծում (ստեղծարար, ինովացիոն, ռեսուրս, SS կենտրոններ) ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան	• Մրցունակ կրթությամբ կադրերի արտագաղթ
8. Սոցիալական ներառում	
• Բնակարանային ապահովվածության բարձր մակարդակ • Բնակարանների գազաֆիկացման բարձր մակարդակ • Բժշկական կազմակերպությունների հասանելիություն, մատչելիություն	• Գյուղական ամբուլատորիաների ոչ բավարար պայմաններ
• Պատմամշակութային կոթողների, տեսարժան վայրերի և թանգարանների առկայություն	• Տարեցտարի բժշկական սպասարկման արդի տեխնոլոգիաներով իրականացման համար պահանջվող կապիտալ ներդրումների ավելացում, որը կհագեցնի նաև ծառայության վճարների ավելացման
9. Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն	
• Առանձին համայնքներում մեծածավալ կանաչապատման աշխատանքների իրականացում • Անտառների վերականգնման աշխատանքներ • Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր մակարդակ	• Օբյեկտներում (շենքեր շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության և էներգաարդյունավետության ցածր մակարդակ, • վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր մակարդակ • Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոչ

• Հանրային և բնակելի հատվածում էներգախնայողության և էներգաարդյունա-վետության միջոցառումների հնարավորու-թյուն • վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորություն	բավարար մակարդակ • Բիոմաքրման կայանների քայքայված վիճակ, միակ գործող կայանի միայն մեխանիկական մաքրման իրականացում • Անտառահատումներ, պայմանավորված հանքարդյունաբերության աշխատանքներով և ջեռուցման նպատակներով • Որոշ համայնքներում օդային ավազանի աղտոտվածության բարձր մակարդակ • Հանքարդյունաբերության արդյունքում հողերի աղտոտվածություն • Ջրային ռեսուրսների օգտագործման ցածր մակարդակ
• Ջրային մեծ պաշարների առկայություն • Վերականգնվող էներգետիկայի աղբյուրների առկայություն, մասնավորապես քամու և հիդրոէներգետիկայի համար	• Բնակլիմայական աղետներ
10. Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ	
• Պետական և տեղական կառավարման համակարգի առկայություն • Հասարակական կազմակերպությունների, գործարարների, ՓՄՁ-ների, ՀԼՄ-ների, ներկայացվածություն հասարակական կյանքում	• Մարզի համայնքների կարողությունների խիստ տարբերություն • Արտաքին կապերի ոչ հավասար բաշխվածություն համայնքներում
• Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր • Աշխատողների վերապատրաստումներ արդի պահանջներին համապատասխան • ՔՀԿ-ների, գործարար միությունների հետ համագործակցությունն ապահովող ծրագրեր, բարեփոխումների գործընթացներով ընթացիկ կամ պլանավորված համայնքային կարողությունների զարգացում	• Որոշ համայնքային մակարդակներում կարողությունների թերի զարգացում • Փոքր համայնքների ֆինանսական հնարավորություններ
11. Հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներ	
• Հարուստ սպորտային ավանդույթներ • Մարզադպրոցների լայն ցանց • Հյուրանոցային տնտեսություններում ներդրումների իրականացում	• Զբոսաշրջային ենթակառուցվածքների անհամաչափ զարգացվածությունը • մարզում առկա 3-րդ կարգի վնասվածություն ունեցող, անավարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվության և վերանորոգման ենթակա բնակելի շենքերի առկայություն
• Մարզում UNESCO կողմից ճանաչված հուշակոթողների առկայություն • Էկո, ագրո, էթնիկ տուրիզմի զարգացմանն ուղղված ծրագրեր • Վանաձորի ճոպանուղու և մարզադաշտի վերակառուցում	

V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ՏԵՍԼԱԿԱՆ

163. **2025թ. ՀՀ Լոռու մարզը կունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն:**

5.2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

164. ՀՀ Լոռու մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ամենամեծ ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթղթի վերլուծական մասում:

165. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունն ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները (հորիզոնական) և գերակա թեմաները/ոլորտները (ուղղահայաց), և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթղթերին, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 24. ՀՀ Լոռու մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ.

ՄԶՌ ռազմավարական նպատակներ	**Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025թթ.**
Մինչև 2025թ. մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում՝ մինչև 10%: – 2025թ.-ի դրությամբ մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը 63% հասցնել 72%-ի, – 2025թ.-ի դրությամբ ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում՝ 12%-ով, – 2025թ.-ի դրությամբ նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվի աճ՝ 20% – ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում՝ 10 %-ով,	Մարզի մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջինիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ – 2025թ.-ի դրությամբ մարզի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 70%-ի, – ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում մինչև 10%-ով, – 2025թ.-ի դրությամբ նոր կազմակերպությունների թվի ավելացում մինչև 10%-ով, – 2025թ.-ի դրությամբ նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների ներգրավում տնտեսության բոլոր ճյուղերի 100-120 կազմակերպություններում:
Մինչև 2025թ. մարզի երեք տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում՝ շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա:	Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ

– գործազրկության մակարդակը 15.7%-ից իջեցնել մինչև 8.8%-ի, – աղքատության մակարդակը՝ 36.2%-ից հասցնել ոչ ավել, քան 26%-ի:	համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա: • 2025թ.-ի դրությամբ թույլ զարգացած տարածքների գործազրկության մակարդակը նվազեցնել 5%-ով ավելի • 2025թ.-ի դրությամբ բարելավել սահմանամերձ համայնքների ենթակառուցվածքները 20%ով
Մինչ 2025թ. ՀՀ Լոռու մարզում կբարելավվի տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը՝ - մինչ 2025 թվականը մարզային վարչակազմերի բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թիվը կհասնի 95%-ի, - մինչև 2025թ. մարզային և համայնքային աշխատողների 80%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր նվիրված մարզային/տեղական զարգացմանը,	Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: • Մինչև 2025թ.-ը մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ յուրաքանչյուր տարի մասնակիցների թվի 80%-ի վերապատրաստում:

1. Արտահանմանը միտված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի	2. Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում	3. Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացում
ՄԶՌ հիմնական գերակայություններ		
Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում:		
Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ		

5.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

162. **<u>Ռազմավարական նպատակ 1.</u>** Առաջիկա տարիներին արդյունաբերության դինամիկ աճի ապահովումը կբերի նաև մարզի մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի զգալի աճի:

163. **Հիմնավորում:** Կստեղծվեն տեխնոլոգիական աշխատատեղեր, որը կբերի աղքատության նվազման, միգրացիայի կրճատման: Այն կլինի համահունչ Հայաստանի 2014-2025թթ. զարգացման ռազմավարությանը՝ արտահանման արդյունաբերության մասով: Մինչև 2025թ. փոքր և միջին բիզնեսի կազմակերպությունների թվի ավելացման արդյունքում դրանց արտադրանքի տեսակարար կշիռը մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում 24%-ից կբարձրանա մինչև 30%-ի, դա կբերի նաև ակտիվ կազմակերպությունների թվի ավելացման՝ արդյունաբերությունում, շինարարությունում, տրանսպորտում, առևտրում և սպասարկման ոլորտում:

164. **<u>Ռազմավարական նպատակ</u>** 2. Մարզի համայնքների կարողությունների համաչափ զարգացում:

165. Հիմնավորում: Դա կնպաստի ոչ միայն համախառն ներքին արդյունքի ավելացմանը, այլ որոշակիորեն կբարելավվի տնտեսական և սոցիալական ծանր վիճակում գտնվող համայնքների բնակչության վիճակը, ենթակառուցվածքը, մշակութային կյանքը, քաղաքային համայնքներում կնվազի գործազրկությունը:

166. **<u>Ռազմավարական նպատակ</u>** 3. Մարզի համայնքների կառուցվածքային բարեփոխումներ և խոշորացում:

167. Հիմնավորում: Մարզի համայնքների կառուցվածքային բարեփոխումները և խոշորացումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել համայնքների աշխատակազմերի և ղեկավար կազմի կրթական մակարդակը, ավելի մեծ նպատակներ և խնդիրներ դնել նրանց առջև՝ համայնքային խնդիրների լուծման, համայնքների սոցիալ-կենցաղային հարցերի բարելավման, ծառայությունների ծավալների ավելացման ուղղությամբ:

168. <u>Գերակա խնդիր 1:</u> Արտահանմանը միտված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի: Վերոնշյալը հնարավորություն կտա մարզի արդյունաբերական արտադրանքում մեծ տեսակարար կշիռ (45.7%) ունեցող հանքարդյունաբերությունը բարձրացնել նոր մակարդակի՝ ավելացնելով արտադրանքի ծավալները և բնապահպանական միջոցառումները: Հագուստի և կոշիկի արտադրանքի ծավալների զգալի մեծացումը կբերի 1000-ից ավելի նոր աշխատատեղերի բացման:

169. **Հիմնավորում:** Կընդլայնվեն պահածոյագործությունը, պանրագործությունը և կաթնամթերքի արտադրությունը: Հանքային, թեթև և սննդի արդյունաբերությունների հետագա զարգացումը հնարավորություն կտա զգալիորեն ավելացնել դրանց արտադրանքի արտահանման ծավալները ԵՄ և ԵԱՏՄ շուկաներ և մարզը մեկ շնչի հաշվով կշարունակի գերազանցել արտահանման միջին հանրապետական ցուցանիշը շուրջ 30%-ով: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն կտա ավելի շատ երիտասարդների ապահովել բարձր վարձատրվող աշխատանքով, իսկ ՀՀ Լոռու մարզը՝ դարձնել Սմարթ մարզ:

170. <u>Գերակա խնդիր 2</u>: Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը կնպաստի մարզի գյուղատնտեսության արդիականացմանը, առաջավոր տեխնոլոգիաների և բարձր արտադրողական ժամանակակից մեքենա-սարքավորումների կիրառմանը, բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածության, ջերմոցային տնտեսությունների և գյուղմթերքների պահպանման ժամանակակից սառնարանային տնտեսությունների քանակի ավելացմանը:

171. Հիմնավորում: Արդյունքում արդյունավետ կօգտագործվեն մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, կզարգանա ինտենսիվ այգեգործությունը Թումանյանի տարածաշրջանում:

172. <u>Գերակա խնդիր 3</u>: Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացում: Մարզում առաջիկա ութ տարիներին կզարգանա մշակութային, գյուղական, ձմեռային և էկոտուրիզմը, կմեծացվի հյուրանոցային տնտեսությունների հնարավորությունները և սպասարկման որակը, կբարելավվեն մարզային և եկեղեցիներին մոտեցող ճանապարհները:

173. **Հիմնավորում:** Մարզի մշակութային արժեքները (եկեղեցական համալիրներ, տուն-թանգարաններ) կդառնան ոչ միայն ներքին զբոսաշրջության, այլ նաև արտասահմանյան

զբոսաշրջիկների այցելության կենտրոններ: Տուրիզմը նաև հնարավորություն կտա մարզում զարգացնել այլ ոլորտներ՝ հուշանվերների, տնայնագործական արտադրանքի, գյուղմթերքների արտադրության և այլն:

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 25. ՀՀ Լոռու մարզի գերակայությունները

Թեմա	Գերակայություն	Հիմնական շահառուներ	Կապը՝ պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	1. Մարզի վերականգնվող էներգետիկայի ներուժի զարգացում, մասնավորապես Դեբեդ գետի և նրա վտակների ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և փոքր ՀԷԿ-երի կառուցում	ՀՀ բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ ✓ *Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակներում արևային համակարգերի կառուցում:* ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի նիստի 12-րդ կետով հավանության արժանացած «ՀՀ հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 35 արձանագրային որոշում՝ ✓ *Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության շրջանակներում հիդրոէներգետիկ պաշարների օգտագործման խթանում:*
	2. Մարզի վարելահողերի օգտագործման արդյունավետության բարձրացում	Մարզի գյուղական բնակավայրերի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում*
Ժողովրդագրական իրավիճակ			
Քաղաքների զարգացում	3. Վանաձոր քաղաքում թեթև արդյունաբերության, SS ոլորտի և ճմեռային տուրիզմի զարգացում	Վանաձորի բնակչություն 82.2 հազ. մարդ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Քաղաքի զարգացման բևեռների*

			հիմնում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվաքանակի աճ:
	4. Ալավերդի և Ախթալա համայնքները, որպես աճի կենտրոններ, զարգացնելով արդյունաբերությունը և մշակութային տուրիզմը	Ալավերդի և Ախթալա համայնքների բնակչությունը	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Քաղաքի զարգացման բևեռների հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, զբոսաշրջության խթանում:*
Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվություն	5. Հասարակական տրանսպորտի աշխատանքների բարելավում	Մարզի բնակչություն, զբոսաշրջիկներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ, զբոսաշրջության զարգացում:*
Հանրային ենթակառուցվածքներ	6. Քաղաքային համայնքների կոշտ կենցաղային թափոնների կարգավորում	Մարզի բնակչության 45.2%-ը	ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի 21-րդ կետով հավանության արժանացած <<ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 49 արձանագրային որոշում՝ ✓ *ՀՀ ողջ տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ստեղծում:*
	7. Ճանապարհների որակի բարելավում	Մարզի բնակչություն, զբոսաշրջիկներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Արտահանման խթանում, բիզնես միջավայրի բարելավում, զբոսաշրջության զարգացում:*
Ներքին արտադրանք և եկամուտներ			
Զբաղվածություն	8. Նոր	Մարզի	ՀՀ կառավարության 2014 թվականի

	աշխատատեղերի բացման միջոցով երիտասարդության շրջանում գործազրկության նվազեցում	բնակչություն	մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ ✓ *Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով:*
Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	9. Արտահանմանը միտված արդյունաբերական ճյուղերի՝ հանքարդյունաբերու-թյան, թեթև և սննդի արդյունաբերության զարգացում, SS ոլորտի զարգացում **(գերակայություն)**	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Արդյունաբերության և արտահանման խթանում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում:*
	10. Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում **(գերակայություն)**	Մարզի գյուղաբնակ բնակչություն	ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի նիստի 15-րդ կետով հավանության արժանացած <<Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը հաստատելու մասին>> N43 արձանագրային որոշում՝ ✓ *Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության և գյուղատնտեսական արդյունավետության բարձրացում:* ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ ✓ *2018-2020թթ. ընթացքում տարեկան մինչև 100հա նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար համապատասխան պայմանների ստեղծում:*
	11. Մշակութային, գյուղական, այլընտրանքային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացում **(գերակայություն)**		ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Զբոսաշրջության զարգացում ու*

			խթանում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների աճ:
Կրթություն, մարդկային կապիտալ	12. Համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության: 13. 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովում: 14. Աջակցություն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու		ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Նախնական (արհեստագործական) և մրջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակի աճ:*

	նպատակով: 15. Մարզի կրթական համակարգի կողմից որակյալ կրթության ապահովում, որը համապատասխանում է շուկայի պահանջներին		
Սոցիալական ներառում	16. Որակով առողջապահության հասանելիության ապահովում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ ✓ *Սոցիալական ապահովության համակարգի բարելավում:*
Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխության հարմարվողականություն	17. Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի 21-րդ կետով հավանության արժանացած <<ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 49 արձանագրային որոշում՝ ✓ *ՀՀ ողջ տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգի ստեղծում:*
	18. Բնապահպանական խնդիրների լուծում՝ պոչամբարների ռեկուլտիվացիա, օդային և ջրային ավազանների աղտոտման դեմ ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, հողի աղտոտվածության ուսումնասիրություն և մոնիթորինգի իրականացում Ալավերդի, Ստեփանավան և Ախթալա համայնքներում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Շրջակա միջավայրի պահպանություն, գյուղական տարածքների զարգացում:*
Մարզային և տեղական զարգացման	19. Համայնքների խոշորացման միջոցով համայնքային	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման

կարողություններ	կարողությունների զարգացում		ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում, զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:*
	20. Համայնքներում, այդ թվում՝ հեռավոր, ավելի կրթված աշխատակազմերի ձևավորում		ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ ✓ *Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակի աճ:*
Այլ հարցեր	21. Սպորտի մասսայականացում երիտասարդության շրջանում ունենք նոր մարզային համալիրների կառուցման անհրաժեշտություն	Մարզի երիտասարդ բնակչություն	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ ✓ *Մարդկային կապիտալի զարգացում:*

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Աղյուսակ 26. ՀՀ Լոռու մարզում ընթացքի մեջ գտնվող ռազմավարական ծրագրեր

Հ/Հ	Ծրագրի անունը, թեմա	Կարճ նկարագիր	Արժեքը	Իրականացնող մարմին	Ժամանակահատված	Համապատասխան գերակայություն
1.	Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի հիմնանորոգում	կմ 0 ÷90+191 անվտանգության ապահովում, թողունակության մեծացում	32.6 մլրդ դրամ	ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	2016-2020թթ.	7
2.	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում	190 մահճակալ/տեղով շենքի կառուցում	4.485.5 մլն դրամ	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե, Տաշիր հիմնադրամ (համաձայնությամբ)	2014-2017թթ.	13
3.	Սմարթ կենտրոնի կառուցում	Գյուղական կյանքի բարելավում, կրթական հնարավորությունների ընդլայնում, ՏՏ-ի օգտագործում տարբեր բնագավառներում	5 մլն ԱՄՆ դոլար	Հայաստանի մանուկներ հիմնադրամ (համաձայնությամբ)	2015-2017թթ.	3,9,12
4.	Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի զարգացում	Մարզի ՏՏ ոլորտի դարբնոց	Դեռևս աղբյուրները և ֆինանսական արժեքները ճշգրտված են:	«Հայաստանի ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ (համաձայնությ	2016-2020թթ.	9

				ամբ)		
5.	Վանաձորի համայնքային ենթակառուցվածքների ծրագիր-փուլ 3	8-րդ ճնշումային գոտու և համայնքի ջրամատակարարման օղակաձև համակարգի շինարարություն	3.3 մլն եվրո	«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Արևմուտք» տարածաշրջանի «Լոռի» տեղամաս (համաձայնությամբ)	2017-2019թթ.	3
6.	«Կոշտ թափոնների կառավարման համակարգ, Վանաձոր» ծրագիր	Ժամանակակից կոշտ կենցաղային թափոնների և սանիտարական մաքրման մեքենաներ ու սարքավորումներ, եվրոպական չափանիշներին համապատասխան տեսակավորող աղբահավաք տարողություններ	8.3 մլն եվրո	Հայ-Գերմանական KFW զարգացման բանկ (համաձայնությամբ)	2017-2020թթ	14
7.	«Թումանյան աշխարհ» զբոսաշրջության կենտրոնի զարգացում	Տուրիզմի զարգացում, ձեռնարկատիրական գործունեության իրականացում	169.0 մլն դրամ	Լոռի տուրիզմի զարգացման հիմնադրամ գրասենյակ (համաձայնությամբ), 7 համայնքներ (համաձայնությամբ)	2015-2020թթ.	11
8.	«Լալվար-Նոյեմբերյան» 110կվ օդային գծերի կառուցում	Նոր օդային էլեկտրահաղորդման գիծը կլինի շուրջ 28կմ երկշղթա գիծ՝ ՀՀ հյուսիս-կենտրոնական մասում	4.394.4 հազ. ԱՄՆ դոլար	Պարսկական «Գամ Արաք Ինդուստրիալ» ընկերություն (համաձայնությամբ)	2016-2018թթ.	1
9.	ՓՀԷԿ-երի կառուցում	տարեկան հզորությունը 9.699հազ կՎտ (արտադրանք՝	6.122.1մլն դրամ (առանց ԱԱՀ)	մասնավոր ներդրողներ (համաձայնությ	2013-2018թթ.	1

		39.8մլն կՎտ ժամ)		ամբ)		
10.	Տ-5-26 Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ ճանապարհի նորոգում	Երկարությունը կազմում է 7.0 կմ, թողունակության բարձրացում	600.0 մլն դրամ ֆինանսա-վորում չկա			11

174. Վերը նշված աղյուսակում ընդգրկված ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

175. ՏԶՌ համակարգումը և իրականացումը կատարվելու է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով: Գործնականում ՏԶՌ-ն փաստացի իրականացվելու և/կամ աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից.

1)Մարզային վարչակազմերի կողմից, հիմնականում՝

ա. ՏԶՌ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,

բ. Մարզի ՏԶՌ նախապատրաստման միջոցով՝ մշակում, վերանայում և փոփոխում՝ ըստ պահանջի,

գ. ՏԶՌ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով,

դ. ՏԶՌ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,

ե. Բոլոր շահագրգիռ կողմերին ՏԶՌ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցով,

զ. Տեղական կառավարական մարմիններին իրենց զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

է. Հասարակական միավորումներին և այլ շահագրգիռ կողմերին աջակցության տրամադրման միջոցով՝ տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ,

ը. Տեղական զարգացման և ծրագրերի պլանավորմանն ուղղված միջքաղաքային համագործակցության խրախուսման միջոցով,

թ. Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

2) <u>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հիմնականում՝</u>

ա. Տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործառույթների իրականացման միջոցով,

բ. Տեղական զարգացման պլանավորման և իրականացման միջոցով,

գ. Ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

3) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ այլ նախարարությունների հետ համագործակցության միջոցով, հիմնականում՝

ա. Տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման միջոցով,

բ. Պետության տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների հետ համահունչ ՏԶՌ իրականացման վերաբերյալ պատկերացում տրամադրելու միջոցով,

գ. Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացման միջոցով:

176. **Ի հավելումն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.**

1) Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,

2) ՏԶ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,

3) Պատրաստում և ՀՀ կառավարություն է ներկայացնում տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ զեկույցները,

4) Կազմակերպում և համակարգում է ՏԶՌ-ների մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

177. **Դոնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից**, հիմնականում ՏԶՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:

178. **Հասարակական կազմակերպությունների կողմից,** հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլնի միջոցով:

179. **Մասնավոր հատվածի դերակատարների կողմից**, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:

180. Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ՏԶՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական առաջադրանքները մարզում: ՏԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

181. ՏԶՌ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիտորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գործնականում ՏԶՌ-ն փաստացի իրականացվելու և աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից:

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

182. Տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) Պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ:

2) ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

183. Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը.

1) **2025թ.-ի դրությամբ՝** մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 72%-ի հանրապետական միջինի նկատմամբ,
2) **2025թ.-ի դրությամբ՝**ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թիվը ավելացնել՝ 10%-ով,
3) **2025թ.-ի դրությամբ՝**ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում՝ 12%-ով,
4) **2025թ.-ի դրությամբ՝** գործազրկության մակարդակը 15.7%-ից իջեցնել մինչև 8.8%-ի,
5) **2025թ.-ի դրությամբ՝**աղքատության մակարդակը՝ 36.2%-ից հասցնել ոչ ավել քան 26%-ի,
6) **2025թ.-ի դրությամբ՝**տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվի աճ՝ 20%,
7) **2025թ.-ի դրությամբ՝**մարզային վարչակազմերի բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թիվը կհասնի 95%-ի,
8) **2025թ.-ի դրությամբ** մարզային և համայնքային աշխատողների 80%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր նվիրված մարզային/տեղական զարգացմանը:

184. Այս ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, և արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ առաջընթացի զեկույցում:

185. ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչների ցանկը (դրանք չափում են ռազմավարական նպատակներին հասնելը) պետք է մշակվի և ընդգրկվի տեքստում: Այս ցուցիչները պետք է գնահատվեն տարեկան առումով՝ մարզպետարանի կողմից, և արդյունքները ներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ-ների առաջընթացի զեկույցում:

186. ՄԶՌ մոնիտորինգը կհամալրվի մանրամասն մոնիտորինգի համակարգով՝ առաջիկա 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործողությունների ծրագրում և հետագա ՏԶԳԾ հրատարակություններում:

187. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում: Հետևյալ ռիսկերն են հայտնաբերվել ՄԶՌ-ների համար, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղթում և կկիրառվեն ՄԶՌ գործընթացի իրականացման ժամանակ:

Աղյուսակ 27. Ռիսկեր, ռիսկերի մոնիթորինգ և նվազեցում

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցում
Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն: Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր, տեղական մակարդակում հաջողակ	Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում՝ կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝ տարածքային և տեղական

իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու ծրագրի նախաձեռնությունը, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզպետարանի կողմից համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:	մակարդակներում:
Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզպետարանի աշխատակազմի և այլ շահագրգիռ կողմերի միջև:	Դասընթաց մարզպետարանի և ՏՋ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի բանիմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:
ՄՋՌ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/ կամ տարբեր իրականացման ընթացակարգեր և պարտականություններ:	Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ ՄՋՌ արդյունքների հրապարակման համար:
Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավված լինելու: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցը ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:	Ներգրավելով շահագրգիռ կողմերին ՄՋՌ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:
Անարդյունավետ մոնիտորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:	Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:
Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում	Ընդհանուր շահերի նույնականացում
ՄՋՌ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն իրագործել առօրյա կյանքին:	Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով ՄՋՌ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը, կապված կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների հետ, կբարձրացնի ՄՋՌ-ի իրազեկությունը և կխթանի դրական պատկերի ձևավորմանը:
ՄՋՌ-ն պետք է կարողանալ մատուցել թե մարզային և թե տեղական մակարդակով: Հաջող ՄՋՌ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների համար:	Կառուցել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցումներ, որոնք համապատասխանում են իրենց տեղական կարիքներին:

188. **ՄՋՌ-ի վերանայում**: ՄՋՌ-ի միջնաժամկետ վերանայումը նախատեսվում է 2021 թվականին (2017-2020թթ համար) և եթե պայմանները պահանջեն՝ ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի: Այս վերանայումը կիրականացվի մարզպետարանի կողմից, սերտորեն կվերահսկվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից, որը կապահովի համապատասխան վերանայման մեթոդաբանություն և գործիքներ:

189.ՄՋՌ գնահատում: 2026 թվականին ՄՋՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021 թվականին, կլինի նաև ՄՋՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

1) **Արդյունավետություն:** Արդյունավետության վերլուծությունն այն է, թե որքան հաջող է ՄՋՌ-ն հասել իր նպատակներին: **Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝**

ա. որքանո՞վ են իրականացել նպատակները,

բ. որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները,
գ. որքանո՞վ են նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին,
դ. որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում,
ե. ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա,
զ. որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

2) **Արդյունավորություն:** Արդյունավորություն է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: **Բնորոշ հարցեր՝**
ա. որքանո՞վ են ծախսերը արդարացված,
բ. որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել,
գ. ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա,
դ. որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով,
ե. կան արդյո՞ք ծախսերի (կամ օգուտների) էական տարբերություններ մարզերի միջև,
զ. ո՞րն է պատճառը:

3) **Համընթացություն:** Համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: Բնորոշ հարցեր՝
ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին,
բ. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

4) **Համապատասխանություն:** Համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությունը: Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝
ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան,
բ. որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին,
գ. որքանո՞վ են նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին,
դ. որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակիչների համար:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

190. Ֆինանսական ռեսուրսներ: ՄԶՌ-ով նախատեսվող ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ պետական և մարզի համայնքների բյուջեների (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները: ՄԶՌ-ի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

191. Մարդկային ռեսուրսներ: ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում կամ ինստիտուտների համակարգ, որը միասին կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր հատվաի, քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համակարգումը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

192. ՀՀ Լոռու մարզպետարանն ունի՝ ***150 հաստիքներ, այդ թվում՝ մարզպետի աշխատակազմ՝ 8, քաղաքացիական ծառայության պաշտոններ՝ 133, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 9, որից՝ 128-ն ունեն բարձրագույն կրթություն (89.5%):***

193. Մարզի համայնքապետարաններն ունեն՝ ***107 համայնքների ղեկավարներ և 610 համայնքային ծառայողներ, համայնքների ղեկավարների 56.1%-ը և համայնքային ծառայողների 56.2%-ը ունեն բարձրագույն կրթություն:***

194. Մարզը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը շահում են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն ՏԿԶՆ-ին, աջակցություն ՏԶ գործընթացներին» ծրագրից (2013-2017թթ.), որը վերջանում է 2017 թվականի հուլիսին: Նախատեսվում է հետագա աջակցություն: Մարդկային ռեսուրսները՝ պատասխանատու ՄԶՌ-ի համակարգման, մոնիտորինիգի, հաշվետվության համար, հետագայում կաջակցվեն կարողությունների զարգացման ինտենսիվ ծրագրով:

195. Տեխնիկական և կազմակերպչական հարցեր: ՄԶՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական ադապտացիա: ՄԶՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ: